1 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1999 ՈՒՐԲԱԹ 172 (1918)

Azg

Azg
armenian daily

Պուտինը երբեք չի ասել, որ ցամաքային գործողություն Չեչնիայում չի լինի

ՉԵՐՈԲՍԱՐԻ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ. ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ- «Ես երբեք չեմ ասել, որ ցամաքային գործողություն Չեչնիայում չի լինի», հինգշաբթի այստեղ հայտարարել է վարչապետ Վլադիմիր Պուտինը, ի պատասխան լրագրողների հարցի: Ռուսաստանի վարչապետը նշել է սակայն, որ իրենք այլևս թույլ չեն տա այն, ինչ տեղի ունեցավ Չեչնիայում 1994-1996 թվականներին: «Ոչ մի գրոհ ու հարձակում չի լինի, որոնք կարող են անիմաստ զոհերի տեղիք տալ զինծառայողների կողմից: Մենք ամեն ինչ կանենք, որպեսզի ապահովենք զինվորների կյանքը», հայտարարել է վարչապետը:

Միևնույն ժամանակ նա նշել է, որ Չեչնիայում «պետք է լուծված լինի գլխավոր խնդիրը՝ ոչնչացնել բանդիտներին, նրանց ճամբարները, ենթակառուցվածքը»: Մեկկվում են զանազան տարբերակներ, նշել է նա, բայց դրանց հիմքում դրված է մեկը՝ «Մենք պետք է ապահովենք ինչպես խաղաղ քաղաքացիների, այնպես էլ զինվորականների անվտանգությունն ու կյանքը»:

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐԾ

Ադրբեջանը հարկադրված կլինի հրաժարվել պատրանքներից

ՈՒՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ինչո՞ւ Ադրբեջանը մերժեց ԵԱՀԿ Սինսկի խմբի նոանախագահների վերջին առաջարկը՝ իբրեւ արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման բանակցությունների վերսկսման հիմք «միասնական պետության» սկզբունքն ընդունելու մասին: Մեզանում գտնվեցին «խելոքներ», որ չհապաղեցին հայտարարել, թե նոր սկզբունքի մեջ ոչինչ «նոր» չէ, իսկ Բաքվի մերժումը ընդամենը մեզ թակարդի մեջ գցելու դիվանագիտական խաղ է: Իբր, «խորամանկորեն» մերժում են, որ մեզ «տաքացնեն», հետո հասնեն իրենց համար ցանկալի լուծման: Անցած բավական մեծ ժամանակահատվածն ապացուցեց, որ Բաքուն ոչ մի «խաղ» էլ չի խաղում, իսկապես անհանգստացած է «միասնական պետության» սկզբունքից եւ ամեն կերպ ձգտում է փոխել այդ ծեւակերպումը, քանզի դա իրոք կարող է տանել ԼՂՀ փաստացի անկախության ճանաչման: Համանախագահների տարածաշրջան կատարած յուրաքանչյուր նոր այցի, ինչպես նաեւ այլ պատեհ առիթներով Ադրբեջանը ձգտում է պարտադրել իր տեսակետը նախ «գրավյալ տարածքների» ազատագրում, փախստականների վերադարձ, ապա նոր ԼՂՀ կարգավիճակի քննարկում եւ Հայաստանի շրջափակման վերացում: Սա նույնիսկ վերադարձ չէ 1988 թ. վիճակին, մի քայլ եւս է, քանզի այն ժամանակ ԼՂԻՄ-ը, իբրեւ Խորհրդային Ադրբեջանի մարզ, ընդունված վարչական միավոր էր նախկին ԽՍՀՄ-ում: Հասկանալի է, որ ոչ ԼՂՀ-ն, ոչ Հայաստանը դրան չեն գնա: Այդ դեպքում ինչո՞ւ է Բաքուն շարունակում համառել: Վերջին հաշվով, խնդրի քաղաքական կարգավորման ուշացումը շատ ավելի իրեն է վնաս, քան մեզ:

Տես էջ 2

ՄՐՑՊԵՏՅԱԿԱՆ

Արտաքին քաղաքականության մեջ Վրաստանի համար առաջնայինը Կովկասն է

ԵՐԵՎԱՆ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Արտաքին քաղաքականության մեջ Վրաստանի համար առաջնայինը կովկասյան կողմնորոշումն է: Վրաստանը կարեւորում է բարիդրացիական հարաբերությունները Հայաստանի, Ադրբեջանի եւ Հյուսիսային Կովկասի երկրների հետ: Այս մասին հայտարարեց Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն, սեպտեմբերի 30-ին հանդիպելով ՀՀ Ազգային ժողովի նախագահ Կարեն Դեմիրճյանի, ԱԺ մշակական հանձնաժողովների նախագահներ եւ խմբակցությունների ղեկավարների հետ:

Կարեն Դեմիրճյանը հակիրճ ներկայացրեց Հայաստանում վերջին տարիներին ընթացող բարեփոխումների արդյունքները, նշելով, որ Հայաստանին հաջողվել է իրականացնել իրավական բարեփոխումներ ժողովրդավարության ուղին որդեգրելու հստակ կամքով: Հայաստանը, ըստ նրա, առայժմ միայն քայլեր է կատարում տնտեսության վերականգնման ուղղությամբ, քանզի խոշոր արդյունաբերական ձեռնարկությունները մասնված են անգործության, եւ դա հանգեցրել է բնակչության գործազրկությանը, ինչը Հայաստանի համար ամենավտանգավոր երեւույթն է: Նա նշեց, որ Հայաստանի իշխանությունները մեծ ուշադրություն են դարձնում փոքր եւ միջին բիզնեսի զարգացմանը: Տնտեսական դժվարություններից բացի, նշեց Դեմիրճյանը, առկա են նաեւ այսպես կոչված «թեժ կետեր», եւ այդ խնդիրների կարգավորումը հնարավոր է միմիայն համատեղ ջանքերի շնորհիվ: Ազգային ժողովի նախագահը հույս հայտնեց, որ Հայաստանի եւ Վրաստանի հարաբերությունները չեն սահմանափակվի զուտ պատասխանական հանդիպումներով, անհրաժեշտ է ծշտությամբ

Էդ. Շեւարդնաձեն ելույթ ունեցավ ՀՀ նախագահի տված պատասխանական ճաշկերույթում

խոսել կոնկրետ հարցերի եւ խմբակցությունների ղեկավարների հետ:

Էդուարդ Շեւարդնաձեն գոհունակությամբ նշեց, որ Հայաստանի եւ Վրաստանի ղեկավարների, խորհրդարանների եւ կառավարությունների միջեւ արդեն իսկ ձեւավորվել են բարի հարաբերություններ: Պարն Շեւարդնաձեն կարեւորեց ընթացիկ այցի արդյունքները, մասնավորապես նախորդ օրը երկու երկրների նախագահների ստորագրած հռչակագիրը, որն ըստ էության պայմանագիր նշանակություն ունի: Նա նշեց, որ առաջիկայում նախատեսվում է ծավալել եւ ստորագրել երկու երկրների միջեւ լայն համագործակցության պայմանագիր, որով եղբայրական հարաբերությունների նոր փուլ կսկսվի:

Բաքվում ՌԴ դեսպանը պահանջել է պատժել Գուլուզադեին

ԲԱՔՈՒ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ- ԱՊՍՏՈՒՅՈՒՆ: Սեպտեմբերի 30-ին Ռուսաստանի ԱԳՆ խոսնակ Վլադիմիր Ռախմանինը Մոսկվայում կայացած ամսվա ասուլիսում հայտնել է, որ ռուսաստանյան կողմը գոհունակությամբ է ընդունել Ադրբեջանի նախագահ Հ. Ալիեւի հայտարարությունը՝ ի պատասխանություն Հյուսիսային Կովկասում Ռուսաստանի գործողությունների: Ռախմանինը շեշտել է, որ Մոսկվան հույս ունի գործնականորեն համագործակցել Ադրբեջանի ու Վրաստանի հետ ծայրահեղականությունը եւ անջատողականությունը Կովկասում կանխելու համար:

Սինչդեռ Բաքվում Ռուսաստանի դեսպան Ալեքսանդր Բլոխինը ադրբեջանական «Էքսպրես» թերթի այսօրվա համարում պահանջել է պատժել Ադրբեջանի պետխորհրդական Վ. Գուլուզադեին, որը հրապարակայնորեն իր բացասական վերաբերմունքն էր արտահայտել Ռուսաստանի կողմից Չեչնիայում իրագործվող գործողությունների նկատմամբ: Բլոխինի կարծիքով, Գուլուզադեին պատժելը ընդհուպ պատասխանատվությունը, «բնականոն ու տրամաբանական քայլ կլիներ»:

Միաժամանակ այսօր Բաքվում բացվեց Ադրբեջանի Միլի մեջլիսի հերթական նստաշրջանը: Պատգամավորները որոշեցին հատուկ հայտարարությամբ հանդես գալ Ռուսաստանում ադրբեջանցիների նկատմամբ իրականացվող ճնշումների դեմ: Ընդդիմությունն առաջարկեց նստաշրջանում քննարկել նաեւ Լեռնային Դարաբաղի հարցը: Սակայն առաջարկը մերժվեց, իսկ Միլի մեջլիսի խոսնակ Ալեսբերովը հայտնեց, որ ԱՄՆ-ից վերադառնալուն պես արտգործնախարար Թ. Զուլֆուգարովը խորհրդարանին կզեկուցի ԼՂ հարցի կարգավորման գործընթացի մասին:

Աղանդներից պրծում չկա, բողոքում են եկեղեցասեր տիկնայք Հայոց աշխարհի

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

դավոռությամբ անհանգստացած են շատերը. Հայ առաքելական եկեղեցին, պետությունը, Ամ պատգամավորները, հասարակական եւ քաղաքական կազմակերպություններ, լրագրողներ, իրենց ավանդաբար առաքելական եկեղեցու հետեւորդներ համարող ՀՀ քաղաքացիներ, որոնց մեծ մասը եկեղեցական ավանդույթներին ջիվում է «մոտավորապես»՝ տոնից տոն, մեռելոցից մեռելոց, մեկ-մեկ էլ, պատեհ առիթով՝ եկեղեցում մոմ վառելով: Այլ է վերջին տասնամյակում (88-ի ավերիչ երկրաշարժից, արցախյան պատերազմից, հետխորհրդային ալան-թալանից հետո) Հայաստանում ստեղծված աղետալի սոցիալ-տնտեսական կացության պարարտ հողի վրա «բուծված» (կամ դրսից ներդրված) աղանդների պարագան: Սրանց հետեւորդները ֆանատիկոսներ են, քրիստոնեական (կամ այլ) ոչ այն է ուսմունքների, ոչ այն է մտավեւեռումների նվիրյալներ, որոնց, անկախ «գաղափարախոսական» տարբերություններից, միավորում է առաքելությունը եւ անտանելի (բնորոշ աղանդավորական) կոչունությունը: Ինքնամոռաց եռանդով, նախանձելի ջանասիրությամբ ու հետեւողականությամբ այդ «ոստմունքների» քարոզիչները սպրդում են ամենուր՝ հոգիներ որսալով առանց միջոցների միջեւ խտրականություն դնելու. կաշառք, խոստումներ, ահաբեկչություն...

Աղանդներին անհրաժեշտ հակահարված տալու ցանկությունը, որ Հայաստանյայց եկեղեցին եւ պետությունն, անկասկած ունեն, բախվում է անգործունեության պատին եւ «մարդու իրավունքների եւ ազատությունների» ոչ աղանդավորներից ոչ պակաս ջերմեռանդ, տեղում բուծվող կամ դրսից ներդրված պատշաճ կազմակերպությունների հակազդեցությանը, որոնք, իրենց ներարկվող «կենարար» գրանցներից ոգեշնչված եւ դրանք արդարացնելու մղումով, համաշխարհային (միջազգային համաադասխան կազմակերպությունների գեկուցագրերում որպես կանոն արձանագրվող) աղմուկ են բարձրացնում, երբ «ազգայնականներն» աղանդավորների (օրինակ, «եհովայի վկաների») բանին բքու են ասում՝ համարձակվելով հիշեցնել, ասենք, հայոց ազգային բանակում ծառայելու իրենց պարտականությունը:

Տես էջ 2

ՀԱՍԼԵՑՅԱՆ ՀԱՐԾԱԴՐՈՒՄ

Իջեցնե՞լ բանկային համակարգը տնտեսության մակարդակին

Թե՞ տնտեսությունը բարձրացնել. ԿԲ-ն, կառավարությունը, ԱԺ-ն բազմակարծիք են

ՆԱՐԴԱՆ ԴԻԼԲԱՐՅԱՆ

«Հայաստանի բանկային համակարգը տնտեսության հիշ թե շատ առողջ սեկտորն է եւ, ըստ իս, պետք է ոչ թե բանկային սեկտորն իջեցնել տնտեսության մակարդակին, այլ տնտեսությունը զարգացնել եւ բարձրացնել բանկային սեկտորի մակարդակին: Ցավոք սրտի, կարող ենք ասել, որ այսօր ընդհանուր առմամբ միտումը հակառակն է», «Ազգին» հայտնեց ԿԲ խորհրդի անդամ Վազգեն Գաբրիելյանը, որպես ամփոփում խորհրդարանական անցած եռօրյա գնահատականների, որոնք կարելի է բնութագրել մեկ բառով «բշնամական», բշնամական ԿԲ-ի եւ ընդհանրապես բանկային համակարգի նկատմամբ: Այս վերաբերմունքը նոր չէ եւ ունի իր պատճառները: Վարկատու-վարկառու հարաբերական բանավեճին «Ազգը» հետեւել է, բայց օրենսդիր մարմնում հնչած ծեւակերպումներն ակնհայտ դարձրին, որ խորհրդարանում մեծամասնություն կազմող քաղաքական ուժերը նոր բյուջետային տարվա նախաշեմին հարձակման են անցնում: Եվ հանձնաժողովների, եւ եռօրյայի նիստերում կարծիքներ հնչեցին ստեղծելու հատուկ հանձնաժողով ԿԲ դրամավարկային քաղաքականության եւ ընդհանրապես գործունեության արդյունքները ուսումնասիրող: հատկապես ՊԿՊ-ների (տեսական կարճաժամկետ պարտատոմսերի) շուկայում, ընդհուպ դատախազությանը եւ այլ իրավապահ մարմիններին դիմելը: Եթե սխալը տնտեսագիտական է, ապա ԿԲ խորհուրդը նախագահի գլխավորությամբ պետք է հրաժարական տա, իսկ սխալված անդամները 5 տարի ժամկետով իրավունք չունենան ընտրվել ԿԲ խորհրդում:

Տես էջ 3

digitised by A.R.A.R.@

ԱՍԱԼԱ

Նշվեց Փարիզի «Վան» գործողության 18-րդ տարեդարձը

Այսր հայրենիքում եւ սփյուռքում աղբող նախկին ազատամարտիկները, քաղաքական դեմքերն ու մշակութային գործիչները, Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ԱՍԱԼԱ) վետերան անդամները երեւանի կամերային երաժշտության տանն ու էջմիածնի մշակույթի պալատի դահլիճում մեծ շուքով տոնեցին «Վան» զինվորական գործողության 18-րդ տարեդարձը:

Թերեւս մեր ընթերցողներից շատերին անծանոթ է «Վանը», որն անկյունադարձային երեւույթ էր սփյուռքահայ նորագույն ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ: 1981 թ. սեպտեմբերի 24-ին բեյրութահայ երեք վրիժառուներ, որոնց ծնողները երիցս տարագրվել ու գաղթականների բնակիչներ էին դարձել թուրքական բռնատիրության ու Արեւմուտքի հանցագործ համագործակցության պատճառով, զենքի ուժով ներխուժեցին Փարիզի թուրքական դեսպանատուն եւ մի քանի ժամ գրավված պահեցին: Հերոս-նահատակ Եղիա Քեչիշյանի անունը կրող մահապարտների այդ խմբակը ցույց տվեց, որ սփյուռքահայն արթնացել է պարտադրված մահաքնից եւ ամբողջ աշխարհին հիշեցնում է անոյաշիժ մնացած ցեղասպանության մասին պահանջելով արդարություն եւ հատուցում: Զինվորական այս գործողության ժամանակ ծանր վիրավորվեցին Վազգեն Սիսլյանն ու Հակոբ Ջուլֆայանը, իսկ Գեւորգ Գյոզալյանը եւ ապա բանտում ինքնասպան եղած Արամ Բասմաջյանը կարողացան պատանդ դարձնել դեսպանությանն ու նրանցով հասնել իրենց վրա բեւեռելով համաշխարհային քաղաքական ու զանգվածային լրատվության շրջանակների ուշադրությունը: Ապա, այն ժամանակվա Ֆրանսիայի ներքին գործերի նախարար Կասդոն դը Ֆերի ու քաղաքական բարձրագույն շրջանակների միջամտությամբ, ավելորդ աղմուկահեղությունից խուսափելու համար, «Եղիա Քեչիշյան կոմանդոն» հանձնվեց ոստիկանությանը:



«Վան» գործողության հերոսները՝ Վ. Սիսլյանը, Գ. Գյոզալյանը, Հ. Ջուլֆայանը:

Ապա եւ սկսվեց ամիսներ տեւող դատավարությունը, որը մեծապես օգնեց Հայ դատի, Հայոց ցեղասպանության ճանաչման գործին: Ֆրանսահայ երիտասարդությունը ոգեւորության ու հայրենասիրության զարթոնք պարեց: Իսկ մեր 3 հերոսները, 7 տարի տանջվելով Ֆրանսիայի բանտերում, ազատվեցին ժամկետից շուտ ու հաստատվեցին մայր հայրենիքում:

Վերադառնալով «Վան» գործողության 18-րդ տարեդարձի տոնակատարություններին, նշենք, որ կամերային երաժշտության տանը տեղի ունեցած հանդիսությանն առանձին փայլ տվեց 70-80-ական թթ. ԱՍԱԼԱ-ի սխրանքները գովերգող գուսան Սեդրակը: Առանձնապես հայ ժողովրդի նորագույն ազգային-ազատագրական պատմությունն անցած հերոսներ Գեւորգ Գյոզալյանը, Վազգեն Սիսլյանը, Հակոբ Ջուլֆայանը, Ալեք Ենիգոմուշյանը, Սիմոն Նահրյանը, Արտաշես Քեչիշյանը եւ ուրիշներ միասնաբար երգեցին Գեւորգ Չաուշին, Սազմանովին, Տալվորիկի քաջ զավակին եւ այլ անմոռանալի դեմքերին նվիրված երգերը:

Մի ժամ հետո ներկաները միացան էջմիածնի մշակույթի պալատի դահլիճում տեղի ունեցած հանդիսությանը՝ նվիրված Եղիա Քեչիշյան հերոսնահատակին ու «Վան» զինվորական գործողության հերոսներին: Խոսք ասացին էջմիածնի քաղաքագլուխը, գիտության, պատմության, մշակույթի գործիչներ: Համերգից հետո որոշակի դոնոս ծափերի տակ բեմ հրավիրվեցին Գ. Գյոզալյանը, Վ. Սիսլյանը, Հ. Ջուլֆայանը:

ՀԱՄՈ ՄՈՍԿՈՓՅԱՆ
Երեւան-Էջմիածին

MEDIA

«Իշխանության տարբեր օղակներում մեզ հանդուրժում են՝ առանց կամենալու»

«Ազգի» գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիսյանը ՄԱՍ հյուրասրահում

«Որո՞նք են մեր լրագրության սահմանները, ի՞նչ էթիկական նորմեր կան, որոնք պարտադիր պետք է լինեն լրագրողների համար», Մամուլի ազգային ակումբի «ԶԼՄ-ները եւ ժողովրդավարությունը» ծրագրի հյուրասրահում հարց տվեց Հակոբ Ավետիսյանը, եւ ինքն էլ պատասխանեց հասարակությանը, հատկապես իշխանություններին հուզող այս հարցին. «Իսկապես որ սահման կա՝ մարդու անձնական կյանքի, արտահայտվելու խնդիրների հարգումը»: «Օրագիր», այժմ «Հայկական ժամանակ» թերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանի հետ տեղի ունեցածից հետո չորրորդ իշխանության առջեւ իրոք խնդիր է ծառացել՝ կանոնակարգել իր գործունեության ոլորտը՝ թույլ չտալով իշխանության մյուս թեւերին հանիրավի միջամտել մամուլի գործերին: Հ. Ավետիսյանը կարեւորեց մամուլի ինքնակարգավորման գործառույթը, որը ինքնաքննադատության լավագույն ձեւն է: Եթե մամուլի բոլոր միջոցները մամուլի մասնագիտական կազմակերպությունների ջանքերով համախմբվեն եւ մշակեն մամուլի գործունեության ազատ ժողովրդավարական, բայց միեւնույն ժամանակ եւ ուրիշների ազատությունը չոտնահարող դաշտ, ապա դատական իշխանությունն ի զորու չի լինի տեղի-անտեղի միջամտել մեր գործերին:

Լրագրողների այն հարցին, թե մամուլն ասենանաբար Հայաստանում դառնում է խիստ քաղաքականացված եւ ազդեցությունների ենթակա, Հակոբ Ավետիսյանը պատասխանեց, որ քաղաքական ուժերը մամուլն այլասերում են՝ ընտրությունից ընտրություն երկուերեք ամսվա օրախնդիր հարցերի համար ստեղծելով եւ ապա փակելով թերթեր ու այլ լրատվամիջոցներ: Քաղաքական այն գործիչներին, որոնք ունեն բավարար հնարավորություն եւ ցանկանում են ազդեցություն ունենալ մամուլի վրա, Հ. Ավետիսյանը տվեց կատակախառը, բայց խիստ արդյունավետ խորհուրդ. «Եթե որեւէ մեկը դրամագլուխ ունի եւ ցանկանում է քաղաքական ազդեցություն էլ ունենալ, թող հիմնի տպարան, բացի մամուլի տարածման. այլընտրանքային գործակալություն... Այսօր մամուլի նկատմամբ Վրեժ Մարկոսյանն ավելի ազդեցիկ է, քան Ռոբերտ Քոչարյանը կամ Վազգեն Սարգսյանը»: Հակոբ Ավետիսյանն առաջարկեց մամուլին վերածգրտել իր հարաբերությունները իշխանությունների հետ, իսկ գործընթացը սկսվել է: Եթե որոշ կուսակցությունների թերթեր խոցաբ վերանում են՝ ԻՄ-ի «Անկախությունը», ԱԺՄ-ի «Այժմ»-ը, ապա մնացյալների պարագայում առկա է խիստ ազատականացում: Այսպես՝ ՀՅԴ մամուլը փոխել է իր աշխատաոճը, «Երկրի» պարագայում չափազանց շահեկան, «Հայոց աշխարհի» դեպքում՝ յուրօրինակ՝ մեջբնդմեջ տպագրվում են վամպիր կանանց բռնաբարության եւ համանման նյութեր, ինչը դաշնակցական մամուլի ավանդույթների համար նորություն է:

Անդրադարձ եղավ վերջերս ավարտված «Հայաստան-սփյուռք» խորհրդաժողովին, եւ «Ազգի» գլխավոր խմբագիրը հավաստեց, որ խորհրդաժողովին նշածողն իջեցվեց՝ հանգեցվելով զուտ հավակվելու, միմյանց հանդիպելու փաստին, այնինչ խորհրդային, բովանդակային առումով կարելի էր ապահովել բարձր մակարդակ: Նվազագույնը վեց ամիս առաջ մասնագետների հետ գիտականորեն քննել հիմնարար հարցեր՝ ի՞նչ է սփյուռքը եւ ի՞նչ կարող ենք մենք տալ մեկմեկու: Այս խնդիրն առավել փոքր սահմաններում՝ Հայաստանի եւ սփյուռքի լրատվամիջոցների տիրույթում կփորձի ճշգրտել ինքը՝ հայաստանյան մամուլը, կազմակերպելով «Հայաստան-սփյուռք» նոր խորհրդաժողով լրագրողական մակարդակով եւ լրատվամիջոցների խնդիրներին նվիրված:

Ն. Դ.

Աղանդներից պրծում չկա, բողոքում են եկեղեցասեր տիկնայք Հայոց աշխարհի

Սկիզբը էջ 1

Հայ եկեղեցասիրաց տիկնանց պատմաշակութային միությունը նույնպես անհանգստացած է աղանդավորականության բարգավաճման փաստից եւ երեկ մի շարք «ծախ» (սոցիալիստական) կուսակցությունների հետ համատեղ ասուլիս էր նախաձեռնել Հայաստանի կոմունիստների միության գրասենյակում՝ հավաստելու «հայ ժողովրդին ներսից բզկտող աղանդավորականության» դեմ պայքարելու հանձնառությունը: Տիկնանց ներկայացուցիչ, միության նախագահ Ֆլորա Շախգուլյանի զայրույթն ուղղված էր հատկապես «հիսնյակի վկաների» դեմ, որոնք «խորացրել են իրենց արմատները Երեւանում» եւ կազմալուծող, աղազգային քաղաքականություն են վարում՝ խցկվելով ընտանիքներից ներս, հաճախ ընտանեկան ողբերգությունների պատճառ դառնում: Որպես ասվածի վկայություն հրավիրված էր «Եհովայի վկաների» զոհերից մեկը՝ Արսեն Մինասյանը, որի ընտանիքը քանդվել է. կինը, զոհանչի ազդեցության տակ ընկնելով, եհովականների հավաքներին ու ծեսերին մասնակից է դարձնում անչափահաս՝ 4 եւ 6 տարեկան դուստրերին եւ, չնայած նրան «խելքի բերելու» բոլոր փորձերին, ընտանիքն այսօր կիսված է. ավագ դուստրը բնակվում է կնոջ (եւ զոհանչի) հետ, կրտսերը՝ հոր եւ վերջինիս ծնողների:

Տկն Շախգուլյանն իր եւ միության առաքելությունը տեսնում է աղանդավորներին «փրաբահելու, համոզելու եւ ճշմարիտ հավատի վերադարձնելու» մեջ: Աղանդավորականության դեմ պայքարում նրան աջակցում են «Սայր եւ մանուկ» հասարակական կազմակերպությունը, Հայաստանի կոմունիստների միությունը, աշխատավորական կոմկուսը, բանվորական միությունը եւ այլ կազմակերպություններ: Ինչպե՞ս, ասուլիսից պարզ չդարձավ: Լրագրողներին հրավիրելու նպատակը կցկտուր ներկայացվեց, լրագրողներն էլ իրենց հերթին անհամբերություն դրսեւորեցին, եւ խոսակցությունը չստացվեց: «Առավոտի» թղթակիցը, մասնավորապես, «կովազանություն» հանդես բերեց Հայաստանի կոմունիստների միության նախագահ Իշխան Թովմասյանի նկատմամբ. կոմունիստները, որոնց ծրագրային դրույթներից մեկն աթեիզմն է, նրա կարծիքով, բարոյական իրավունք չունեն: (Միության ծրագրում, սակայն, ինչպես պարզվեց, «աթեիզմի» դրույթ չկա.՝ փոխարենն ամրագրված է աղանդավորականության դեմ պայքարելու պատրաստակամությունը): Լրագրողներն, ի հավելումն, իրագործված կոնկրետ նախաձեռնությունների եւ հակաաղանդավորական պայքարի հստակ միջոցառումների մասին լսելու ակնկալիքներ ունեին եւ Հայ եկեղեցին խաբարումներից զերծ պահելու ընդհանուր խոսքերն անտեղի, մամուլում հերթական անգամ երեւալու ցանկության դրսեւորում համարեցին:

Մինչդեռ աղանդավորական շարժումները եթե ոչ «ճնշելու», ապա գոնե չափավորելու խնդիրն ամենալուրջ ուշադրության եւ վերաբերմունքի է կարոտ, եւ նմանօրինակ միջոցառումները խորապես մտածված ու լավագույնս նախապատրաստված պետք է լինեն: Այլապես «հոնքը սարքելու փոխարեն ալքն էլ կհանեն»՝ հակառակ ազդեցություն գործելով, ինչպես, թերեւս, առանց հստակ ասելիքի հրավիրված այս ասուլիսն էր:

Ադրբեջանը հարկադրված կլինի հրաժարվել պատրանքներից

Սկիզբը էջ 1

Մենք մեր ազատությունը նվաճել ենք, անկախ նրանից՝ ԼՂՀ-ն միջազգայնորեն ճանաչվա՞ծ է, թե՞ ոչ: Իսկ Ադրբեջանն իրոք տարածքներ ես սպանալու խնդիր ունի, որը կարելի է լուծել երկու ճանապարհով՝ կամ նոր պատերազմով, կամ խաղաղ բանակցություններով խելացի փոխզիջմամբ: Նավթով երբեւէ ուժեղանալու եւ նոր պատերազմ սանձազերծելու հույսերը չափազանց մշուշոտ են Բաքվի համար: Այլ առիթով գրել եմ, որ նոր պատերազմ ոչ մեզ, ոչ Ադրբեջանին թույլ չեն տա: Մնում է բանակցությունները վերսկսելու դեմքում Ադրբեջանն իսկապես կարող է հույս ունենալ իր ինչ-ինչ պահանջների բավարարման համար: Բայց ծգծգում է: Անհասկանալի բան չկա՝ փորձում է ժամանակ շահել, հուսալով, թե միջազգային կոնյունկտուրան այնպես կփոխվի, որ մեզ ուղղակի վերջնագիր կներկայացնեն... հոգուս իրեն: Սակայն ինչու այդպես ընդգծվում է Բաքվի հակառուսականությունը եւ Երեւանի ռուսամետությունը, ուռճացվում Հայաստանում գտնվող ռուսական ռազմաթենակայանների «վտանգը»: Այնպես էլ միանգամայն մարտավարություն չէ, որպես թվում է: Եթե ռուսները դուրս մղվեին Կովկասից, ինչն, անկասկած, շատերի երազանքն է, եւ այժմ փորձ է արվում հասնել դրան Դաղստանում ծավալված իրադարձություններով, ապա կարելի կլիներ չտարակուսել, որ այս տարեվերջին Ստամբուլում կայանալիք ԵԱՀԿ գագաթաժողովում Լիսաբոնի ոգով մի փաստաթուղթ կընդունվեր՝ ի վնաս մեզ: Բայց այս հույսերին վիճակված չէ իրականանալ: Հայաստանը միակողմանի դիվանագիտություն չի վարում ամենեւին, եւ Երեւանի «ռուսամետությունը» բնավ չի խանգարում, որ մեր երկիրն ընկալվի իբրեւ դեմի Եվրոպա եւ Եվրոպական կառույցներ միսված երկիր, որը Արեւմուտքի համար նույնքան բարեկամ կարող է լինել, որքան, առնվազն, Ադրբեջանը: Երկրորդ՝ ռուսներն արդեն ոչ միայն ասամներ, այլեւ ժանիքներ են ցույց տալիս Հյուսիսային Կովկասում, եւ բոլորի համար պարզ է, որ նրանք տարածաշրջանից հեռանալու դեպքում Ստամբուլի գագաթաժողովը, ինչպես երեւում է, Դարաբաղի հարցին հստակ անդրադառնալու հիմքեր չի ունենալու, քանի որ Երեւանի վրա ճնշում գործադրելու որեւէ պատճառ չկա՝ Երեւանը համաձայնել է վերսկսելու բանակցային գործընթացը ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահների առաջարկած հիմքով: Եթե որեւէ ճնշման անհրաժեշտություն լինի, ապա պիտի Բաքվի վրա լինի, որ շատ ավելի տրամաբանական է: Վերջապես, Ստամբուլի գագաթաժողովն արդեն այժմ կարելի է կիսով չափ արժեզրկված համարել, որովհետեւ որոշ (եւ բավական լուրջ) աղբյուրների տվյալներով՝ եվրոպական երկրների մեծամասնությունն ամենեւին հիացած չէ «21-րդ դարի խաղաղության խարսիան» Թուրքիայում ընդունելու հեռանկարից: Այդ խարսիան, ամենայն հավանականությամբ, Ստամբուլում կմնարկվի, բայց կընդունվի այլ տեղ: Եվ դա շատ արդարացի կլինի, քանզի չի կարելի «խաղաղության խարսիա» ընդունել մի երկրում, որն անցած դարում ամենից ավելի է մեղանչել խաղաղության դեմ: Անհեթեթություն կլիներ, եթե միջազգային հնչեղության այդ կարեւոր փաստաթուղթը պատմության մեջ մտներ... «Ստամբուլյան խարսիա» անունով:

Այսպիսով, Բաքվի թե՛ աշխարհաքաղաքական, թե՛ նավթային, թե՛ այլ հույսերը պատրանքային են: Կարելի է չտարակուսել, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահների «միասնական պետության» սկզբունքը չի փոխվելու, առաջարկը մնալու է ուժի մեջ: Եվ Բաքվին այլ բան չի մնալու, բացի այդ հիմքով բանակցությունների վերսկսումից:

«ԱԶԳ» ՕՐԱԳԻՐԸ
Հրատարակության 8 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թել՝ 529353, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն ՀՐԱՅՐ ՁՈՐԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 562941
Apple Macintosh համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Յուրաքանչյուր «Ազգի» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ՈՒՄԲԱԳԻԿ

ՍՓՅՈՒՌՔ-ՀԱՅԱՍՏԱՆ

«Այսոիսի վարչաոես ու բարենպաստ մթնոլորտ անկախությունից ի վեր չենք ունեցել»

Հավատացած է հնդկահայ գործարար Հովսեփ Սեֆերյանը. Հայ գործարարների ասոցիացիան շրջադարձ է կատարում դեպի հույս ու վստահություն՝ 180 աստիճանով

Դեռեւս 90-ականների սկզբին, Հայաստանի անկախության հռչակումից հետո, սփյուռքի շատ գործարարներ հույս ու հավատով եկան Հայաստան, սկզբում ճանաչողական նպատակով, ապա որոշեցին բարեգործներ, իսկ նրանցից առավել համարձակները փորձեցին մասնակցել երկրի տնտեսության ազատականացմանը, սեփականաշնորհմանը եւ հայրենիքում ունենալ իրենց սեփական բիզնեսը: Այդ ժամանակների ռամկավար շրջանակների դժվարություններին **«Ազգն»** արդեն մի քանի անգամ անդրադարձել է, սփյուռքյան դաշնակցական շրջանակների նկատմամբ վերաբերմունքի մասին խոսելն էլ ավելորդ է: 1991 թ. վերոհիշյալ ոգեւորության ալիքի վրա Հայաստանում ստեղծվեց Հայ գործարարների ասոցիացիան (ՀԳԱ), որի նախաձեռնողների մեջ, ի դեպ, կային եւ ՈԱԿ շրջանակներից, եւ ՀԲԸՄ-ից եւ Հայկական ասամբլեայից: Ասոցիացիան ուներ հեռու գնացող ծրագրեր, գործարարներն իրենց հետ բերել էին պատկառելի կապիտալ, սակայն, ինչպես չիրականացավ միասնական հայրենիքի գաղափարը, այդպես էլ ձախողվեցին ասոցիացիայի ծրագրերը:

Նշենք, որ Հայաստան-սփյուռք համաժողովով 90-ականների սկզբի ոգեւորությունը կարծես թե վերականգնվում է, սկսվել է ոգեւորության նոր ալիք, եւ թերեւս դրանով պայմանավորված փորձ արվի նորից կրկնելու որոշ ձեռնարկներ, այդ թվում՝ Հայ գործարարների ասոցիացիան: Պատճառներից մեկը նաեւ, ասոցիացիայի նախաձեռնողների հույս ու հավատի արթնացումն է դեպի ներկայիս իշխանություններն ու նրանց կողմից համաժողովում հնչած խոսքերը:

«Անկախությունից ի վեր Վազգեն Սարգսյանի նման վարչաոես չենք ունեցել, ինչպես նաեւ այսպիսի բարենպաստ մթնոլորտ իրականացնելու թե հայրենիք-սփյուռք միասնության գաղափարը, թե սփյուռքահայության ակտիվ մասնակցությունը հայրենի տնտեսության մեջ»: Այսպիսի լավատեսական կարծիք հայտնեց երեկվա ասուլիսում ասոցիացիայի նախագահ Հովսեփ Սեֆերյանը: Հիշեցնենք, որ նա ՀԳԱ-ի չորրորդ նախագահն է: սփյուռքի հայտնի գործարարներ Պերճ Մարլյանից, Վահե Ճազմաղարյանից, Լեւոն Սիարոնյանից հետո: Ինչ վերաբերում է անցյալ իշխանություններին, ապա նա կարծիք նախորդների, կոնկրետ վարչաոեների մասին եւս յուրօրինակ էր: Նրանք չեն ունեցել կառավարությունների մեջ իրենց տեղը, եւ իրականում նրանց խանգարել են ի կատար ածելու իրենց գաղափարները ու գիտելիքները: Իսկ Վ. Սարգսյանը, ըստ հնդկահայ գործարարի, «հզոր վարչաոես է, որը գիտե թե ինչ է ուզում, եւ ամեն ինչ կանի իր նպատակներին հասնելու համար»: Եվ դա հիմք է տալիս ենթադրելու, որ ժամանակն է ակտիվացնելու սփյուռքահայերի գործունեությունը Հայաստանում: Քանի որ **«Ազգն»** իր նախորդ համարներում անդրադարձել է Հ. Սեֆերյանի պատկերավոր գնահատականներին անցյալ իշխանությունների խաղաքաղաքականության հետեւանքների եւ սփյուռքահայ գործարարների հիասթափությունների մասին, մնում է միայն մեջբերել որն Սեֆերյանի, իր հավատմամբ, ասվածաբնչյան մեջբերումը, որը մոտավորապես հնչում է այսպես՝ «Որտեղ է Ձեր հարստությունը, այնտեղ է Ձեր սիրտը» (), ասել է թե այն հայը, որը սիրում է իր հայրենիքը, պետք է ունենա իր հարստությունը, այսինքն գործը հայրենիքում: Ինչ վերաբերում է Հայ գործարարների ասոցիացիայի ծրագրերին ու նպատակներին, դրանք շատ մեծ են եւ հեռուն գնացող: Նախ, պետք է կենտրոնացնել սփյուռքի ներուժը վերակենդանացնելու հայրենի տնտեսությունը, վերականգնել գործարանները, ստեղծել աշխատատեղեր, «յուրաքանչյուր նոր աշխատատեղի համար մոտ պիտի վառենք էջմիածնում»: ՀԳԱ-ի կոնկրետ ծրագրերը պետք է լինեն առաջին հերթին հայ եւ օտար ներդնողների մասին տեղեկատվական բազայի ստեղծումը, ուսումնասիրել արտահանման հեռանկարներ ունեցող ձեռնարկությունները, կատարել մարքեթինգ, գտնել ներդնողներ, ստեղծել գործարար ծրագրեր եւ առաջարկել հետաքրքրվողներին, օժանդակել նաեւ պատրաստի բիզնես-ծրագրերով Հայաստան եկածներին, մի խոսքով ամեն ինչ հանուն տնտեսության վերակենդանացման: **«Ազգի»** այն հարցին, թե որտեղ է լինելու ասոցիացիայի եւ վերջերիս այդքան հիշատակվող Զարգացման հայկական գործակալության տարբերությունն ու զուգահեռ աշխատանքը, քանի որ վերջիններս նպատակներն էլ գրեթե նույնն են, ապա, ըստ Հ. Սեֆերյանի, ի տարբերություն ՀԳԱ-ի, իրենք շահույթ հետապնդող կազմակերպություն են: Կազմակերպելու են բաժնետերերի բաժանորդագրություն (մեկ բաժնետոմսը կլինի մոտ 100 դոլարի կարգի) եւ եթե գործերը հաջողվեն՝ կստանան շահույթ: Ներկայումս ասոցիացիան ունի մոտ 110 ներդնողներ, որոնց թիվը, հույս կա, եկող տարի կտասնապատկվի: Ինչ վերաբերում է ասոցիացիայի հիմնադիր կապիտալին, ապա նախկինից տարբեր բանկերում մնացել է դեռեւս 320 հազարի չափի կապիտալ: Դա կարող էր ավելին լինել, եթե, ըստ Հ. Սեֆերյանի, անցյալ իշխանության որոշ չլինեին չարաշահումներ պատասխանատուների միջնորդությունների հետ մեկտեղ, տարբեր անհատների կողմից գրավ դնելու եղանակով գումարների յուրացում, մի խոսքով այն բոլոր երեւույթները, որոնցից ժամանակին տուժել են, Հ. Սեֆերյանի բնորոշմամբ, «խաբված սփյուռքահայերը»: Ինչ վերաբերում է վերջին մտքին, ապա ՀԳԱ նախագահը ասուլիսի սկզբից մինչեւ վերջ լավատես էր, որ այս անգամ իրեն չեն խաբվի:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐԱՅԱՆ

Հ.Գ. *«Ազգը» խնդրեց որն Սեֆերյանին լուսաբանել, թե ո՞րն է իր սեփական բիզնեսը Հայաստանում: Հ. Սեֆերյանը Հնդկաստանում պատվավոր հյուպատոս լինելով, այն առաջին սփյուռքահայ գործարարներից էր, որ մասնակցեց ՀՀ սեփականաշնորհման գործընթացին: Ներկայումս նա «Երազ» ԲԲԸ բաժնետերերի խորհրդի նախագահն է եւ տնօրինում է ինչպես ավտոգործարանի, այնպես էլ էջմիածնի պլաստմասսայե իրերի գործարան ԲԲԸ-ի, «Նաիրիս» ներկերի արտադրության ԲԲԸ-ի բաժնետոմսերի հսկիչ փաթեթը: Հ. Սեֆերյանի ներդրումներին, ինչպես նաեւ «Երազ» գործարանի վիճակին «Ազգը» կանդրադառնա առաջիկայում:*

Փիղը կա, տեղափոխողներ չկան

Մոտ 30 տարի առաջ Երեւանի կենդանաբանական այգուց փախած Վովա փղի ողբերգական մահից հետո, ամեն տարի այգու ղեկավարությունը հավաստիացնում է, որ սոյաստում է նոր փղի, որը շուտով տեղ կհասնի: Սակայն մայրաքաղաքի կենդանաբանական այգու առանց այն էլ աղքատիկ կազմը չի համալրվում մի նոր Վովայով: Երեկ ժուռնալիստների միությունում Հնդկաստանում ՀՀ պատվո հյուպատոս, գործարար Հովսեփ Սեֆերյանը այն հարցին, թե ինչու տեղ չի հասնում մի առիթով իր խոստացած հնդկական փիղը, անկեղծորեն պատասխանեց. «Փիղ դաստավորելը հարց չէ, դժվարը փիղը տեղ հասցնելն է»: Նա հավաստիացրեց, որ հնարավոր է շուտով միջոցներ գտնվեն, եւ Հնդկաստանում արդեն պատվիրված փիղը վերջապես տեղ հասնի:

Իշեցնե՞լ բանկային համակարգը տնտեսության մակարդակին

Սկիզբը էջ 1

Աժ ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական հանձնաժողովի նախագահ Վարդան Խաչատրյանն առավել զուսպ էր, սակայն նա եւս մատնացույց արեց մի շարք խախտումներ, որոնց աղը բյուրեղացած էր՝ ԿԲ-ն չի կատարել իր առջեւ դրված թիվ 1 խնդիրը՝ ապահովել ծիշտ դրամավարկային քաղաքականություն, որի արդյունքում կպահպանվի գների կայունությունը, այսինքն՝ երկրում կլինի սղաճի այնպիսի ցուցանիշ, ինչ ծրագրավորված է բյուջեի մասին օրենքում: ԿԲ նախագահ Տիգրան Սարգսյանից դժգոհություններ «Միասնություն» պատգամավորական խմբի որոշ անդամներ **«Ազգին»** ներկայացրին առավել շոշափելի՝ կադրային գործոնով: Վկայակոչվեց ԿԲ ղեկավարության շարքերում առկա տարակարծությունը, որի հետեւանքով կադրային արտահոսք է սկսվել: Շուրջ մեկ ամիս առաջ ԿԲ վճռորոշ օղակից՝ առեւտրային բանկերի գործունեությունը վերահսկող ծառայությունից հեռացել են Գագիկ Լոփոյանը եւ Բաբիկ Նաջարյանը: Վերջինս տեղավորվել է Ագրոբանկում, փաստենք, որ այսօր Ագրոբանկը ղեկավարում է նախկին Ֆինանսների նախարար եւ ԿԲ աշխատակից Էդվարդ Սանդոյանը:

«Ազգը» դիմեց խորհրդարանում ԿԲ դրամավարկային քաղաքականության հաշվետվությունը ներկայացնող Վայե Գաբրիելյանին՝ պարզաբանումների ակնկալիքով:

«Բանկային համակարգի թուլացումը հաստատ Հայաստանին օգուտ չէ»

ԿԲ խորհրդում ամենանոր անդամը ամենից առաջ արժանացավ Աժ հանձնիմանանիներին, քանզի իրոք խախտվել էր օրենքը. ԿԲ նախագահի բացակայության դեպքում Աժ-ին անցած տարվա հաշվետվությունը պետք է ներկայացներ խորհրդի ավագ անդամը՝ Աշոտ Ավետիսյանը: Վայե Գաբրիելյանն **«Ազգին»** հայտնեց, թե այդ ժամանակ Վաշինգտոնում պատասխանատու այցով գտնվող Տիգրան Սարգսյանից հնարք հաստուկ լիազորագիր է ստացել, եւ այդ լիազորագիրը վաղաժամ ներկայացվել է Աժ-ին, ուստի իրեն զեկուցող նշանակելու մասին որոշումը կանխավ հայտնի է եղել օրենսդիրներին: Վայե Գաբրիելյանն իր ծեւակերպումներում չեզոք էր եւ նշեց, թե դժվարանում է գնահատական տալ խորհրդարանի բավական բշնամական գնահատականներին՝ փոխարենը նախընտրեց տնտեսագիտական բացատրություններ:

«Մեզ մեղադրում են, թե վարկեր չենք տալիս, կամ տալիս ենք բարձր տոկոսադրույքներով, բայց պետք է հասկանալ, թե ինչպիսի ահավոր վիճակի մեջ կհայտնվեին մեր բանկերը, եթե վարկեր տրամադրեին բոլոր ցանկացողներին՝ ցածր տոկոսադրույքներով: Հայաստանում վարկ տալը խիստ ռիսկային է, եւ ԿԲ-ն հետեւում է ռիսկայնության գործոնի չեզոքացմանը, որովհետեւ բանկերը միակ պետական հաստատություններն են, որ իրավունք ունեն բնակչությունից ավանդներ ներգրավելու: Մենք պատասխանում ենք ավանդատուների գումարները եւ նրանց շահերը: Ես ձեզ ուղղակի կառաջարկեի՝ հետաքրքրվել ծանոթ վարկառուներից՝ նրանցից քանի՞սը արժանահավատություն ներշնչող բիզնես-ծրագիր ունեն, ցավոք, քչերը: Շատերը վկայակոչում են գրավը: Շատ հաճելի է, որ գրավ ունեն, բայց բանկի համար գրավը երկրորդական է: Հատկապես եթե նկատի առնենք նոր քաղաքացիական օրենսգրքի հոդվածները, ուր նշված է, թե գրավը պետք է իրացվի որոշակի ժամկետում: Այսօր բազմաթիվ բանկեր ունեն գրավներ եւ չգիտեն՝ ինչպես իրացնել: Դրա համար էլ, եթե նախկինում, իբրեւ գրավ, բանկերն անշարժ գույք էին վերցնում, ապա այժմ խուսափում են, որովհետեւ պարզ չէ իրացման մեխանիզմը: Մեր հարցին, թե որքանո՞վ են արդարացի վարկառուների բողոքները՝ գրավները ընդունելու մասին, Վահե Գաբրիելյանը պատասխանեց, որ գրավի գինը բանկի ամահանույթով չի որոշվում, այլ այդ գրավի իրացվելիության իրական հնարավորությամբ:

ԿԲ եւ Ֆինանսների նախարարություն՝ հավերժական մրցակցություն

Վայե Գաբրիելյանը միանշանակ անդարդարացի համարեց Հ.Հ ԿԲ-ին ներկայացվող պահանջը՝ տասնորդական կոտորակների ճշտությամբ կառավարել սղաճը: Նա պնդեց, որ սղաճի ապահովումը ոչ միայն ԿԲ-ի դրամավարկային քաղաքականությունից է կախված, այլեւ Ֆինանսների նախարարության գործունեությունից, ընդհանուր բյուջեից եւ տնտեսության փաստացի իրավիճակից: Մեր այն փաստացի հարցին, թե երկու տարի դեֆլյացիա ապրող տնտեսությունն ի՞նչ բուժամիջոցների կարիք ունի, Վայե Գաբրիելյանն ասաց. «Պնդել, որ Հայաստանում խոր դեֆլյացիա է միջին ցուցանիշների առումով, ճիշտ չէ: Դեֆլյացիա եղել է 1997-ի դեկտեմբերին 98-ի դեկտեմբերի համեմատությամբ: Տարեկան միջին սղաճը ԿԲ-ն ապահովում է: Ինչ վերաբերում է դեֆլյացիոն պրոցեսներին, ապա դրանք ամենից առաջ բացատրվում են Հայաստանի տնտեսության խոր սեզոնայնությամբ, ներմուծման հակվածությամբ»: Հայաստանյան տնտեսությունն, իրոք նման է ճնած եւ միայն ոտքի առ ոտքի արթնացող դշխուհու, որ արթնանում է եռամսյակից եռամսյակ, բայց ծեռնարկատիրական հագիվ նկատելի աշխուժացումն էլ տարեվերջին դարձյալ մարում է, ինչի արդյունքում չի ապահովում գների կայունությունը, անկում է ապրում գնողունակությունը:

ԿԲ աշխատակիցների միջին աշխատավարձը 1998-ին 89 հազար դրամ էր

Ամենաոոպուլիստական, բայց գործազուրկ հասարակության համար ամենացավագին ու մեծչելին ԿԲ աշխատակիցների բարձր աշխատավարձերի թեման է: Աժ-ում ԿԲ-ին մեղադրեցին 98 թ. աշխատավարձերի օրենքով սահմանված ցուցանիշը գերազանցելու մեջ: Վայե Գաբրիելյանը միանշանակ էր. ԿԲ-ն ոչ միայն չի գերազանցել վարչական ծախսերը, այլեւ տնտեսել է: Պարզապես ներկայացուցչական ծախսերը ներառել է վարչական ծախսերի կառուցվածքում՝ հետեւելով հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշներին, այնինչ կառավարությունը դեռեւս երկար ժամանակ առաջնորդվելու է այլ հաշվառման մեթոդիկայով: Ինչ վերաբերում է աշխատավարձերի չափին, ապա 98 թ. եղել է 89 հազար դրամ, որ հավասար է բանկային համակարգի միջին աշխատավարձին: Հիշեցնենք, որ ԿԲ-ի մասին օրենքով ԿԲ աշխատակիցների աշխատավարձը պետք է լինի միջին բանկային աշխատավարձի չափ: Այս տարի այդ աշխատավարձերն աճել են, ըստ որոշ տվյալների՝ մերձենալով 100 հազարի:

ԿԲ-ին ներկայացվող երկրորդ մեղադրանքը ՊԿՊ-ների շուկայում իրական բնույթի գործառնություններ իրականացնելն է, Վայե Գաբրիելյանը համաձայն էր, թե մեղավորներ գտնել պետք է. բայց դրանից առաջ պետք է պարզել՝ կա՞ արդյոք մեղք, իրակա՞ն է, թե՞ ոչ: Միաժամանակ նա չմոռացավ նշել, որ ԿԲ-ն գործառնություններ է իրականացնում ՊԿՊ-ների երկրորդային շուկայում եւ ոչ թե առաջնային, իրենց համար ՊԿՊ-ները դրամավարկային քաղաքականության գործիքներ են՝ իրացվելիությունը ներարկելու կամ ներքաշելու՝ նայած ՊԿՊ-ների ա՞նքն է, թե՞ վաճառքը, իսկ տոկոսադրույքները որոշվում են շուկայով: Կարող ենք ենթադրել, որ մնացյալը Ֆինանսների նախարարության տիրույթում է:

digitised by A.R.A.R.@

ազգային

Հրատարակություններին, որոնք հրաժարակել են մեր հայրենակիցների արտահայտման գաղթելու սուր խնդրին վերաբերող իմ բաց նամակը, ես խոստացել եմ կանոնավորապես ներկայացնել իմ ստացած բանավոր կամ գրավոր արձագանքները

Հեռախոսազանգ «Ազարբնոց» օդանավակայանից. «Հենց նոր իջա Մոսկվայի ինքնաթիռից, հայտնեց տղամարդու մի առույգ ձայն, եւ ուղերձ եմ բերել ձեզ համար մի մարդուց, որը շատ էր խնդրում՝ վայրէջք կատարելուն պես հանձնեմ ձեզ»:

Կես ժամ անց հանդիպեցինք իմ

տանը: Նամակը դրված էր երկարուկ ծրարի մեջ: Մեջբերում եմ մի հատված. «Գրում եմ ուղղակի ինքնաթիռում՝ Ձեր «Հերթ օտարության համար» հոդվածը ընթերցելուց անմիջապես հետո: Ուղեկցորդուհիները լրագրերը բաժանեցին մեզ եւ հետո, ինչպես հասկացա, գրեթե բոլորի ձեռքին Ձեր հոդվածն էր: Գուցե այդ պատճառով շուտով ամբողջ սրահը սկսեց ննջարկել Ձեր «Բաց նամակում» բարձրացված հարցերը: Մի քանի խոսք իմ մասին: Դեռեւս ոչ շատ վաղուց ես դասվում էի «երիտասարդ շնորհալիների», «երիտասարդ գիտնականների» շարքը: 80-ականների վերջին բոլորովին չէի կասկածում, որ հեռու չէ այն օրը, երբ ափսարհը կլսի իմ մասին: Իմ գիտական ափսանները տպագրվում էին ոչ միայն Երեւանի, Մոսկվայի, Նովոսիբիրսկի հրատարակություններում, այլեւ արտասահմանում: Սակայն ամենին էլ չեմ ուզում պատմել իմ անձնական ճակատագիրը, թե ինչպես երազանքներս շուտով մնացին խորհրդային տիրության ավերակների տակ: Ասեմ միայն, որ 90 թ., որպեսզի ձեռքիցս բաց չթողնեմ վերջին հնարավորությունը, տեղափոխվեցի Նովոսիբիրսկ, ավելի ճիշտ՝ ԽՍՀՄ ակադեմիայի սիբիրյան բաժանմունքը: Եվ ահա, գտնվելով Ձեր «Նամակի» ազդեցության տակ, մտածեցի գուցե հետագա հրաժարակումների համար, ինչպես Դուք եք անվանում, դրամատիկ ցուցանիշներ պետք կգան Ձեզ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի սիբիրյան բաժանմունքից գիտնականների արտահոսքի, կամ ինչպես հաճախ անվանում են, «գիտական մտքի արտահոսքի» հետեւանքների մասին: Այսօր տեղեկատվության միջոցների ռուսական օրգաններում հաճախ են գրում, թե ինչպես է կործանվում գիտությունը, առանց որի զարգացման անհնար է պատկերացնել երկրի ապագան: Նույն բանն է կատարվում նաեւ Հայաստանում:

Հատկապես դրա համար էլ որոշեցի Ձեզ ուղարկել «Նեզավիսիմայա գազետայում» հրապարակված մի հոդված, որում պատմում են ռուսական գիտության հոգեվարքի մասին, մասնավորապես՝ ռուսական ակադեմիայի սիբիրյան բաժանմունքի մասին: Նման բան է տեղի ունենում, ինչպես վերջերս համոզվեցի, հայկական գիտության հետ...

Հայ գիտնականների, հատկապես «կոչումնավոր» երիտասարդության արտագաղթի մասին պաշտոնական տվյալներ մեր ձեռքի տակ չկան: Այնպես որ, մեր կորուստների մասին կարող ենք դատել անուղղակիորեն: Բավական է հիշել, որ Գիտությունների ազգային ակադեմիային կից դեռ վերջերս գոյություն ունեին ավելի քան հարյուր գիտահետազոտական ինստիտուտներ, խոշոր (համամիութենական մասշտաբի) գիտական կենտրոններ եւ օջախներ, չհաշված բազմաթիվ ճյուղային, միութենական եւ պաշտպանական «փակ արկղերը»: Դրանց բացարձակ մեծամասնությունը կամ լիկվիդացվել է, կամ վերջին շնչում է:

Գուցեթե այնքան էլ կոռեկտ չէ համեմատվել ռուսական ցուցանիշների հետ, սակայն, կարծում եմ, որոշ վերապահությամբ, կարելի է զուգահեռներ անցկացնել: Միայն սիբիրյան բաժանմունքից եւ միայն 1998 թ., ինչպես գրում է «Նեզավիսիմայա գազետան», տարբեր պատճառներով երկրից հեռացել են «668 գիտաշխատողներ», դրանց թվում՝ 63 դոկտորներ, 321 գիտությունների թեկնածուներ, գիտական կոչում չունեցող 284 գիտաշխատողներ: Ընդհանրապես նույնքան էլ հեռացել են 1997 թ.: Ինչ վերաբերում է ամբողջ Ռուսաստանին, ապա այնտեղ թվերն ուղղակի աստղաբաշխական են:

Ստույգ տվյալներ չունենալով հայ գիտնականների արտասահման տեղափոխվելու վերաբերյալ, խոսենք պատճառի մասին, որը, թերեւս, համանման է խորհրդային ամբողջ տարածքում գործող երկու ծերանոց, որտեղ տպաստարկում են 450 տարեցների: Մեկ տուն-ինտերնատ էլ գործում է Շիրակի մարզիտեսարանի ենթակայության ներքո: Նախարարության հաշմանդամների եւ վետերանների հիմնահարցերի վարչության պետ Զեմմա Բաղդասարյանի հավաստմամբ, ծերանոցները գերծանրաբեռնված են: Այնտեղ խնամվող տարեցների զգալի մասն ունի երեխաներ, սակայն սիրված են եղել դիմել տուն-ինտերնատների օգնությանը: Չնայած վերջինների գերծանրաբեռնվածությանը, Հայաստանում իրականացվող սոցիալական քաղաքականությունն ուղղված է տնային պայմաններում միայնակ տարեցների նկատմամբ ցուցաբերվող բժշկական, հոգեբանական եւ իրավաբանական ծառայությունների գործունեության ընդլայնմանը: Դա դրական տեղաշարժ է թե՛ տնտեսական, թե՛ հոգեբանական առումներով: Տուն-ինտերնատներում խնամվող մեկ տարեց մարդու համար պահանջվում է 40 հազար դրամ, իսկ տնային պայմաններում՝ բնականաբար ավելի քիչ: Բացի այդ, մարդն ապրում է իր հարազատ օջախում, իսկ նրան անհրաժեշտության դեպքում օգնություն են ցույց տալիս երիտասարդ, աշխատունակ մարդիկ: Սոցիալական այդ ծառայությունը գործում է ՀՀ սոցաշխատանքային նախարարության կենսաթոշակառուների սոցիալական պաշտպանման կենտրոնի կազմում եւ պաշտպանում է հազարից ավելի միայնակ, անօգնական ծերերի եւ հաշմանդամների:

Այսպիսով հանդերձ, դեռեւս օրենսդրորեն լուծված չեն միայնակ ապրող (բայց երեխաներ ունեցող) ծերերի պաշտպանման հարցերը: Օրենսդրորեն երաշխավորված չէ նաեւ միայնակ ծերերի մահվան դեպքում արժանապատիվ հուղարկավորության առումներով: Տուն-ինտերնատներում խնամվող մեկ տարեց մարդու համար պահանջվում է 40 հազար դրամ, իսկ տնային պայմաններում՝ բնականաբար ավելի քիչ: Բացի այդ, մարդն ապրում է իր հարազատ օջախում, իսկ նրան անհրաժեշտության դեպքում օգնություն են ցույց տալիս երիտասարդ, աշխատունակ մարդիկ: Սոցիալական այդ ծառայությունը գործում է ՀՀ սոցաշխատանքային նախարարության կենսաթոշակառուների սոցիալական պաշտպանման կենտրոնի կազմում եւ պաշտպանում է հազարից ավելի միայնակ, անօգնական ծերերի եւ հաշմանդամների:

Այսպիսով հանդերձ, դեռեւս օրենսդրորեն լուծված չեն միայնակ ապրող (բայց երեխաներ ունեցող) ծերերի պաշտպանման հարցերը: Օրենսդրորեն երաշխավորված չէ նաեւ միայնակ ծերերի մահվան դեպքում արժանապատիվ հուղարկավորության

հարցերը: «Նեզավիսիմայա գազետան» գրում է. «Աշխատանքի համար արտասահման մեկնելու առաջին պատճառը նյութական վիճակն է, հետազոտությամբ զբաղվելու ընթացքում փողի մասին չմտածելու հնարավորությունը»:

Ի դեպ, արդեն տվյալներ կան արտասահման մեկնածների մասին

ԱԶԳ

Միջազգային

ԳԵՐՄԱՆԻԱ

Հայ-գերմանական ընկերություն. «Զգում ենք 1915-ի ցեղասպանության ճանաչմանը»

1914-ին, ցեղասպանության նախաշեմին, Յոհաննես Լեպսիուսն ու Ավետիք Իսահակյանը Բեռլինում հիմնեցին Հայ-գերմանական ընկերությունը՝ նպատակ ունենալով պաշտպանել այդ տարիների շարունակական կոտորածներից մազապուրծ հայ գաղթականների շահերը, վերաբնակեցնել նրանց Գերմանիայում եւ այլ երկրներում: 1915-ին ու եղեռնին հաջորդած տարիներին ընկերությունն ավելի ակտիվացրեց եւ ընդլայնեց գործունեությունը՝ արեւմտահայերին անմիջականորեն փրկելով եւ ամեն կարգի օգնություն ապահովելով:

Հայ-գերմանական ընկերությունն այսօր էլ շարունակում է գործել, թեպետ որոշակիորեն փոխել է գործունեության բնույթը: Ավելի քան 230 անդամից բաղկացած կազմակերպությունն այժմ հիմնականում զբաղված է հրատարակչական գործունեությամբ, ուր մշտապես անդրադառնում է ցեղասպանության ճանաչման հիմնախնդիրներին:

Հայաստան-սփյուռք համաժողովին մասնակցելու հրավերով Երեւանում էր գտնվում ընկերության ղեկավարներից մեկը՝ գերմանուհի Էլվիրա Քիենդլը, որը ներկայացրեց ընկերության ներկայիս գործունեության ժամանակակից պատկերը:



Նվիրված: Վերջին երեք տարիների ընթացքում դրանք մեծ թիվ են կազմել ու ամենատարբեր խնդիրներ արծարծել, ինչպես ասենք, «Հայաստանը ցեղասպանությունից 80 տարի անց», «Ձեր տնտեսական գործընկերը Կովկասում» եւ նմանօրինակ անվանում ու բովանդակություն ունեցող այլ թեմաներ:

– Ինչպիսի՞ն են Ձեր տպավորությունները համաժողովից:

- Որպես Հայաստանը շուրջ 20 տարի ճանաչող ու սիրող անձ, ես բնականաբար, խանդավառությամբ ընդունեցի համաժողով անցկացնելու գաղափարը: Սակայն նման համաժողովների կայացման ճանապարհին անելիքներն ու դժվարությունները շատ են լինում: Համաժողովի անցկացումը, որպես առաջին քայլ, անշուշտ ողջունելի էր, թեպետ արդյունավետության գործակիցը հետագայում պիտի բարձրացվի:

Ինչ վերաբերում է հայ-գերմանական ընկերությանը, ապա խոստացել ենք եւ պիտի ավելի նպաստենք տեղի հայերի ու գերմանահայերի կապերի սերտացմանը:

– Ասացիք, որ ընկերության նպատակներից մեկն էլ ցեղասպանության հարցի անընդհատ արծարծումն է: Գործնական տեսանկյունից դատելով, ի՞նչ կտա այդ արծարծումը:

- Չգիտեմ որքանով իրատեսական կհամարվի այդ նպատակը, սակայն ցեղասպանության փաստի անընդհատ հիշատակման միջոցով մենք ձգտում ենք հասնել դրա պաշտոնապես ճանաչմանը գերմանական կառավարության կողմից: Գաղտնիք չէ, որ այն տարիներին գերմանական կառավարությունն ակտիվորեն համագործակցել է թուրքական իշխանությունների հետ եւ, ինչո՞ւ չէ, մասնակցության ու մեղքի իր բաժինն ունի կատարված ոճրագործություններում: Սրանք լոկ խոսքեր չեն, այլ աղացույցներով հիմնավորված փաստեր, որոնց արձանագրությունները հայտնաբերել ենք նաեւ Գերմանիայի արտգործնախարարության արխիվներում:

Սակայն մեր երկրի կողմից ցեղասպանության ճանաչումը մեծ բարդություններ հետ է կապված: Նախ՝ գերմանական ու թուրքական կառավարություններն այսօր էլ սերտորեն համագործակցում են եւ քաղաքական ընդհանուր շահեր ունեն: Հետո՝ գերմանահայ համայնքն այնքան մեծաթիվ ու հզոր չէ, ինչպես, օրինակ, Ամերիկայի կամ Ֆրանսիայի հայ համայնքները: Իսկ թուրքերն, ի դեմ, նույնպես պարապ նստած չեն եւ տեղեկատվական ամենատարբեր միջոցներով զբաղված են հատարակական կարծիք ձեւավորելով: Գերմանիայում գործում է թուրքական ընկերություն, ուր նմանօրինակ հարցեր են քննարկվում: Ընկերության անդամներն այս տարվա գարնանն անգամ այցելեցին Հայաստան: Այսինքն՝ յուրատեսակ մրցակցություն է ծավալված՝ հարցը բարձրացնելու կամ կոծկելու, սխալ կամ ճիշտ ուղղությամբ զարգացնելու: Իրոք դժվար է նման պայմաններում քարոզչական աշխատանք իրականացնելը, թեպետ երեւի հենց կողմերի մրցակցությունից բարձրացած աղմուկն էլ սիրտ քանդել ցեղասպանության երեւույթի հանդեպ գոյություն ունեցող անտարբերության ու համրության պատը:

Գոյություն ունի եւս մի գործոն, որը մեզ մեծապես խանգարում է: Գերմանացիները դեռեւս բարդույթավորված ու մտահոգ են հրեաների ցեղասպանության հարցով, եւ չափազանց ծանր ու դժվարին գործ է նրանց բացատրել, որ դարասկզբին եղել է եւս մի ցեղասպանություն, որին վերտին մասնակից է եղել իրենց երկրի կառավարությունը: Նրանց հենց միայն մտածողությունն է հրաժարվում այս փաստն ընկալելուց: Սակայն եթե մեղավորությունը կա, պիտի ընդունվի եւ քավվի: Ըստ իս՝ սա է ճիշտ օրենքը, որ պիտի կյանքի կոչենք մի ողջ հազարամյակի ավարտին:

ԼՈՒԻԶ ԲԱԲԱՅԱՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Քլինթոնը մտադիր է լուծել Կիպրոսի հարցը

Ըստ երեւույթին, ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնը ջանում է օգտվել թուրք-հունական հարաբերությունների բարելավման առիթից՝ կիպրական հարցը կարգավորելու համար: Ընդ որում, ԱՄՆ-ը սատարելու է Թուրքիայի թեկնածությունը՝ Եվրամիությանն անդամակցելու համար, մանավանդ որ եվրոպական մայրաքաղաքները համեմատաբար փոխել են իրենց դիրքորոշումն Անկարայի նկատմամբ: Սա այն բանից հետո, երբ նրանք վերջինիս խստորեն ճնշադատել էին ժողովրդավարության եւ մարդու իրավունքների առումով քաղաքական բարեփոխումներ չկատարելու համար:

Քլինթոնի ասելով, ինքը ջանում է ՄԱԿ-ի շրջանակում եւ առանց նախապայմանների վերականգնել բանակցությունները Թուրքիայի եւ Հունաստանի միջեւ՝ հույս հայտնելով, որ նրանք համաձայնության կհասնեն Կիպրոսի խնդրում: Ակնկալվում է, որ առաջիկա շաբաթ այդ երկու երկրներ կուղեւորվի ԱՄՆ նախագահի հատուկ բանագնացը, հայտնել է ամերիկացի մի պաշտոնյա Քլինթոն-Էջեւիթ հանդիպումից հետո:

Մյուս կողմից, ամերիկացի պատվիրակի առաքելության հաջողությունը, անտարակույս, նախապատրաստելու է նոյեմբերին Աթենք եւ Անկարա Քլինթոնի կատարելիք պաշտոնական այցերը, որոնք տեղի են ունենալու ԵԱՀԿ-ի սամիտի գագաթաժողովի լուսանցքում: Իմիջիայլոց, որոշ դիտորդներ չեն բացառում նաեւ Բիլ Քլինթոնի այցը Դամասկոս եւ Թել Ավիվ հենց այդ օրերին՝ Սիրիա-Իսրայել բանակցությունների վերսկսման գործում բեկում մտցնելու նպատակով: Ա. Ս.

Շեւարդնաձեն եւ Հիլարիի եղբայրները

Երբ Հիլարի Քլինթոնի եղբայրներ Հուգ եւ Թոնի Ռոդեմները որոշեցին 1 մլն դոլար ներդնել Վրաստանի կաղնու տնկարաններից մեկում, չէին պատկերացնում, թե դա ինչպիսի հետեւանքներ կարող է ունենալ: Ընդամենը մի քանի օրում վրացական կաղինը վերածվեց կարեւոր պետական գործի:

Ամեն ինչ սկսվեց օգոստոսի վերջերին, երբ Հիլարիի գործարար եղբայրներն այցելեցին Վրաստան: Թբիլիսիում էդուարդ Շեւարդնաձեի հետ հանդիպելուց հետո նրանք մեկնեցին Աջարիա, որը վերջին տարիներին իրեն ինքնավար է հռչակել: Աջարական կաղինն օգտակար համարելով ամերիկյան դեղագործական արդյունաբերության համար՝ Ռոդեմ եղբայրները պարտավորվեցին ավելի քան 1 մլն դոլար ներդնել Աջարիայում: Բայց խնդիրն այն է, որ Բիլ Քլինթոնի աներձագները պայմանագիր ստորագրեցին Աջարիայի նախագահ Ասլան Աբաշիձեի հետ, որը Շեւարդնաձեի գլխավոր ընդդիմախոսն է:

Շեւարդնաձեին Սոֆիտակ տանը լավ են ընդունում, քանի որ 1994 թ.-ից նա բացահայտ արեւմտամետ քաղաքականություն է վարում: Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների նկատմամբ Քլինթոնի վարչակազմի ներկա քաղաքականությունը Կոնգրեսի քննադատությանն է արժանանում: Բացի դրանից, Վրաստանում այժմ ընտրարշավ է սկսվել: Այնպես որ, Սոֆիտակ տան ազգային անվտանգության գծով խորհրդական Սենդի Բերգերն օրերս խստիվ դատապարտեց Ռոդեմ եղբայրներին՝ պահանջելով չեղյալ հայտարարել գործարքը: «Պուեն» հանդեսը տեղեկացնում է, որ անցյալ շաբաթ, մինչ Շեւարդնաձեն Սոֆիտակ տանը զրուցում էր Բիլ Քլինթոնի հետ, Հիլարիի եղբայրներն աճապարեցին Փարիզ, որպեսզի չեզոք տարածքում հանդիպեն Ասլան Աբաշիձեի հետ եւ հրաժարվեն գործարքից:

Ի դեմ, բանակցությունների առթիվ Ռոդեմ եղբայրները լրագրողներին որեւէ մեկնաբանություն չտվեցին՝ դրանք համարելով մասնավոր գործ: Մինչդեռ Ասլան Աբաշիձեն հայտարարեց. «Շեւարդնաձեն վիժեցրեց Աջարիայում նոր աշխատատեղեր ստեղծող այդ գործարքը, որպեսզի վնասի ինձ: Դա ցույց է տալիս, թե երկրում նրա վնասակար գործունեությունը որքան լայն չափերի է հասնում»:

Պ. Բ.

ՀԱՄԱՌՈՏ

Ֆրանսիան, Գերմանիան եւ Իտալիան մտահոգություն են հայտնել Չեչնիայի իրավիճակի առնչությամբ

ՓԱՐԻԶ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Ֆրանսիան, Գերմանիան եւ Իտալիան հաստատում են իրենց հավատարմությունը Ռուսաստանի Դաշնության տարածքային ամբողջականության սկզբունքներին, - ասվում է երեք երկրների արտգործնախարարների այն համատեղ հայտարարության մեջ, որն ստացվել է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի փարիզյան բաժանմունքում: - Ֆրանսիան, Գերմանիան եւ Իտալիան վերստին հայտարարում են Ռուսաստանի Դաշնության տարածքում կատարվող ահաբեկչական գործողությունների դատապարտման մասին, եւ կուզենային, որ պարզվեին այդ գործողությունների բոլոր հանգամանքները»: Միեւնույն ժամանակ նախարարները խոր մտահոգություն են հայտնել Չեչնիայում իրավիճակի վատթարացման, քաղաքացիական բնակչության համար դրա հետեւանքների եւ այն վտանգի առնչությամբ, որ կարող է ունենալ լարվածության սաստկացումն ամբողջ տարածաշրջանի կայունության համար: Ուստի մենք «երկխոսության եւ քաղաքական լուծում որոնելու կոչ ենք անում», քանի որ «միայն նման ճանապարհը թույլ կտա Ռուսաստանի եւ տարածաշրջանի ժողովուրդների շահերին համապատասխանող ելք գտնել»:

Ադրբեջանում անվստահությամբ են վերաբերվում Չեչնիան շրջանցող նավթամուղ կառուցելու ծրագրերին

Ինչպես Բաքվում լրագրողներին է հայտարարել Ադրբեջանի պետական նավթային ընկերության նախագահ Նաթիկ Ալիեւը, պրակտիկան ցույց է տվել, որ «Ռուսաստանն այժմ ի վիճակի չէ ապահովելու նույնիսկ ադրբեջանական նավթի մեծ ծավալների արտահանումը, էլ չենք խոսում արտասահմանյան ընկերությունների»: «Ես չեմ ուզում թերագնահատել ադրբեջանական նավթն ապահովությամբ տեղափոխելու պրն Կալյուժնու (ՌԴ վառելիքի եւ էներգետիկայի նախարար- ԱՐ. Մ.) հայտարարությունների նշանակությունը, սակայն այդպիսի պնդումներ մենք բազմիցս ենք լսել, ասել է Ն. Ալիեւը: Ռուսաստանի պնդումները Ղազախստանից Նովոռոսիյսկ նավթամուղ կառուցելու մասին՝ իր երկրով ադրբեջանական նավթն արտահանելու նպատակով, դատարկ տեղից են գալիս եւ հիմնավորված չեն կոնկրետ գործերով», տեղեկացնում է Ինտերֆաքսը:

ԳՈՐԾԱՐՔԵՐ

Վենեսուելայի նախագահի նավթային նոր քաղաքականությունը

Վենեսուելայի նախագահ Հուգո Չավեսը, ըստ երեւույթին, հասել է իր նպատակին: Օրերս նա ինքնակամ հրաժարականի ոգի տակ պաշտոնանկ արեց երկրի պետական նավթային ընկերության՝ PDVSA-ի նախագահ Ռոբերտո Մանդինիին եւ նրա պաշտոնում նշանակեց իր անվերապահ կամակատար Հեկտոր Չավալդինիին: Վերջինս նախկին խոռվարար գեներալ է եւ այժմ փաստորեն տիրում է երկրի չորրորդ իշխանությանը՝ նավթին, որից ստացվում է Վենեսուելայի արտարժույթի մուտքերի 80 տոկոսը:

Նավթային այս փոփոխ հեղաշրջումից ընդամենը մի քանի ժամ անց նախագահ Չավեսն աճապարեց հռչակել Վենեսուելայի էներգետիկ քաղաքականության նոր ուղղությունները: ԱՄՆ-ը, որը վենեսուելական նավթի հաշվին բավարարում է սեփական էներգետիկ կարիքների 15 տոկոսը, այժմ դասված է Կարակասի «շարքային հաճախորդների» թվին: «Անցել են այն ժամանակները, երբ մենք Սաուդյան Արաբիայի հետ մրցում էինք դեպի ԱՄՆ առաջին արտահանողը լինելու համար», հայտարարեց նախագահը:

Կուբան այսուհետեւ Վենեսուելական նավթ կստանա արտոնյալ պայմաններով: Անմաքուկ նավթը Հավանային կմատակարարվի միջազգայինից ցածր գներով, ինչպես դա արդեն արվում է Կենտրոնական Ամերիկայի երկրների եւ Հայիթիի համար: Բացի դրանից, նախագահ Չավեսը բրազիլական Մանաուս քաղաքում հանդիպել է Բրազիլիայի նախագահ Ֆեռնանդո Կարդոսոյի հետ, որպեսզի լրամշակի Վենեսուելական PDVSA-ի եւ բրազիլական նավթի «Պետրոբրաս» ազգային ընկերության միածուլման նախագիծը: Ինչպես նշում է «Պուեն» հանդեսը, նախագահ Չավեսի հեռագնա նպատակն է նավթը որպես զենք օգտագործել առավել տարբերակված արտաքին քաղաքականություն մշակելու համար:

Նախագահ Չավեսը մտադիր է մասնավորապես Վենեսուելայի համար առաջատար տեղ ապահովել նավթ արտահանող երկրների կազմակերպության OPEC-ի մեջ: Այդ նպատակով նախատեսված է կազմակերպության պետությունների նախագահների երկրորդ գագաթաժողովն անցկացնել 2000 թ. մարտին, Կարակասում:

Պ. Բ.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Բազմալեզու հայագետը

Լուսաբ ակնավոր լեզվաբան, վաստակաշատ մանկավարժ, բուհական գործի կազմակերպիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Գալստյանի ծննդյան 70-ամյակը:

Պրոֆ. Ս. Գալստյանը ծնվել է 1929 թ. Սյունյաց աշխարհում Ղափանի շրջանի Կեմանց գյուղում: 1947 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի 40-րդ միջնակարգ դպրոցը եւ նույն թվին ընդունվել ու 1952-ին գերազանցության դիպլոմով ավարտել է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի ու գրականության բաժինը: 1953-56 թթ. սովորել է համալսարանի ասպիրանտուրայում՝ ժամանակակից հայոց լեզվի մասնագիտությամբ (գիտ. ղեկավար՝ ակադեմիկոս Գ. Մելիք) եւ սահմանված ժամկետում՝ 1956 թ. պաշտպանել է թեկնածուական՝ «Ս. Նալբանդյանի լեզուն ըստ հրապարակախոսության տվյալների» թեմայով:

1967-62 թթ. նա աշխատել է ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում: 1962-ին վերադարձել է մայր համալսարանի հայոց լեզվի ամբիոն՝ որպես ավագ դասախոս, դոցենտ: 1987-ին պաշտպանել է դոկտորական թեզ՝ «Ածանցումը եւ ածանցները ժամանակակից հայերենում» վերնագրությամբ: 1987-ից հայոց լեզվի ամբիոնի պրոֆեսոր է:

Պրոֆեսոր Ս. Գալստյանն իր բազմաժամյա բեղմնավոր գործունեության ընթացքում հաջողությամբ համատեղել է ուսումնական-դասախոսական, վարչական ու գիտահետազոտական աշխատանքները:

Սակայն 1964-70 թթ. եւ 1980-82 թթ. եղել է պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալ, 1972-79 թթ. արտասահմանյան հաղորդագիրների նախապատրաստական ֆակուլտետի դեկան, 1971-80 թթ. նույն ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի վարիչ:

Լայն է պրոֆ. Ս. Գալստյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը: Նա հայերենի բոլոր բաժիններին վերաբերող տասնյակ մենագրությունների, ուսումնական ձեռնարկների ու դասագրքերի, տարբերակ բառարանների, մի քանի տասնյակ ուսումնասիրությունների, հոդվածների, գրախոսականների հեղինակ է:

Հայոց գրական նոր լեզվի աշխարհաբարի պատմությանն է նվիրված «Սկզբնական աշխարհաբարի պատմության» (1963) աշխատությունը, որտեղ հանգամանորեն քննվում են գրաբարյան ընթացքն արեւելահայ իրականության մեջ, հյուսիսափայլյան ու Նախիջեւանի աշխարհաբարի լեզվական առանձնահատկությունները:

Իրեն հատուկ զանազանությամբ հավաքած փաստական հարուստ նյութի հիման վրա նա ձեռնամուխ է լինում արդեն իր համար մի նոր բնագավառի՝ ժամանակակից հայ գրական լեզվի ածանցների համակարգի հետազոտությանը: Լեզվի գիտության վերջին նվաճումների հաշվառմամբ նա նախ առանձին ուսումնասիրություններով ներկայացրել է հայերենի բառակազմության հիմնական եղանակներից ու միջոցներից մեկի՝ ածանցման ու ածանցների մասնավոր հարցերը («Հոմանունությունը եւ ածանցների հոմանշային շարքերը» (1974), «Գոյականական հիմքերից ածականներ կազմող ածանցները ժամանակակից հայերենում» (1975) եւ ապա՝ հրատարակել «Ածանցումը եւ ածանցները ժամանակակից հայերենում» կարիտալ աշխատությունը, որում կատարվում է արդի հայերենի ածանցների իմաստաբանական, ծեւաբանական, բառակազմական քննությունը, բերվում եւ գնահատվում են բառակազմական բոլոր հնարավոր կաղապարները, նշվում դրանց կիրառական-գործառնական արժեքը, արվում են տեսական կարեւոր նշանակություն ունեցող եզրակացություններ:

Մեծ է պրոֆ. Ս. Գալստյանի վաստակը հայ բառարանագրության բնագավառում:

Նոր տիպի բառարանագրական աշխատություն է 1975 թ. լույս տեսած մասնագիտական-բացատրական, բազմալեզվյան «Լեզվաբանական բառարանը» (համահեղինակներ Հ. Պետրոսյան, Թ. Ղարագուլյան), որի բառացանկն ընդգրկում է ոչ միայն հայ լեզվաբանական-հետազոտական եզրերը՝ սկսած 5-րդ դարից մինչեւ նորագույն ժամանակները, այլեւ ընդհանրապես ժամանակակից լեզվաբանական գրականության մեջ տարածված եզրույթաբանությունը, աշխարհի լեզուների ու գրաբարակների անվանումները: Գլխաբառի մասնագիտական սահմանման ու բացատրության, աշխարհի լեզուներին, առանձին լեզվաընտանիքներին, որեւէ լեզվով խոսողների թվաքանակին վերաբերող համապատասխան տվյալներին զուգընթաց բերվում են նաեւ հայերեն եզրերի թարգմանությունները՝ անգլերենում, ֆրանսերենում, գերմաներենում, ինչպես եւ լատիներենում եւ հունարենում:

Հաջորդ աշխատանքը հայ ժողովրդի լեզվական նշակույթի անդրադարձն է՝ ամփոփված ավելի քան 20 հազար դարձվածքային միավոր պարունակող «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանում» (1975), որ ընդգրկում է ինչպես արդի գրական հայերենի, այնպես էլ ժողովրդական, գավառական-բարբառային այն դարձվածքները, որոնք լայնորեն թափանցել են գեղարվեստական գրականության մեջ կամ գործածվում են ժողովրդախոսակցական լեզվում:

Իր ինքնատիպությամբ աչքի է ընկնում մոտ 150 հազար բաղադրյալ բառ պարունակող «Հայոց լեզվի բառակազմական բառարանը», որտեղ տրվում են յուրաքանչյուր բաղադրության կառուցվածքն ըստ առանձին բաղադրիչի (ինչպես արդի լեզվամտածողությամբ, այնպես էլ պատմական առումով), բաղադրյալ բառի ասպիճանական կազմությունը, բաղադրության կազմում առաջին անգամ հանդիպող բառարմատի ստուգաբանությունը, բաղադրիչների հնչյունափոխության բոլոր դեպքերը, գլխաբառի քերականական, ոճական գործառական նշումներ ու բնութագրումներ:

Պրոֆ. Ս. Գալստյանի եռանդուն մասնակցությամբ ավարտին է մոտենում «Արդի հայերենի բացատրական նոր բառարանը», որը պարունակում է արդի գրական հայերենի երկու տարբերակների՝ արեւելահայերենի եւ արեւմտահայերենի մոտ 240 հազար բառ եւ դարձվածք:

Ավելի քան 500 հեղինակային մամուլ կազմող այս նոր քառահատոր բառարանի քառորդ մասի հեղինակն է եւ գլխավոր խմբագրական կազմի եռյակի անդամը:

Դրվատանքի են արժանի նրա ծառայությունները արտասահմանյան հաղորդագիրների ֆակուլտետի ստիպոհայ ուսանողության համար հեղինակած հայերենի դասագրքերը, ուսումնական ձեռնարկները, ուսուցողական եւ տեղեկատու նյութերը:

Գիտական մեղվաջան գործունեության ու վարչական ոչ դյուրին աշխատանքներին զուգընթաց մոտ չորս տասնամյակ պրոֆեսոր Ս. Գալստյանը մայր բուհում երիտասարդական եռանդով հայերեն է դասավանդում՝ իր բոլոր բաժիններով (հնչյունաբանություն, բառագիտություն, ծեւաբանություն, շարահյուսություն), ղեկավարում տասնյակ դիպլոմային ու կուրսային աշխատանքներ եւ ժամանակ գտնում դառնալու պաշտոնական ընդդիմախոս դոկտորական եւ թեկնածուական ատենախոսությունների:

Նրա դասախոսական բովով անցած մի քանի հազար ուսանողներ, այդ թվում ստիպոհայեր, աշխատում են մայր հայրենիքում եւ հայրենիքից դուրս: Վաստակաշատ հոբելյարը հարուստ հոգեւոր հարյուրամյակը: Թող երկար, շատ երկար, բերքառատ լինի նրա կյանքի ոսկե աշունը:

ԱՇՈՏ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Պրոֆեսոր

Անին 100 հուշարձանների «Կարմիր» գրքում

Համաշխարհային հուշարձանների հիմնարկության կողմից ամեն 2 տարին մեկ հրատարակվող ցուցակում մտնելու է նաեւ Անի քաղաքը, որպես պատմության կարոտ աշխարհի 100 հուշարձաններից մեկը: Ցուցակի հուշարձաններից չորսը գտնվում են Թուրքիայում, բացի Անիից՝ Կեմերը լեռան հուշարձանները, Զարպահոյուի հնությունները, Ստամբուլի Ձիրեմի մզկիթը: Անի քաղաքը 1319 թվականին ավերվել է երկրաշարժից եւ սելջուկյան արհավիրքից:

Աշխարհահռչակ արտիստուհի Սոֆի Շիկոլոնեն, որն աշխարհին հայտնի է Սոֆի Լորեն անունով, իր ծննդյան հերթական տարեդարձ տեսնելու 29-ը. դիմավորեց Միլանում տոմ սաղ Ջինա Ջերեմի եւ Փոփ երգիչ Ռիկի Մարտինի հետ. Զորդ Արմանի պատրաստի հաղորդավարների նորաձեւությունների ցուցադրման արահում:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱԼԱՔԵՐ

Հարություն Հազարյանի «Թափառող որքերը» լոնդոնյան հռչակավոր «Քրիստի» աճուրդում

Լոնդոնում 1766 թ. հիմնադրված աշխարհում ամենահին եւ ներկայումս ամենամեծ ու ամենահեղինակավոր «Քրիստի» աճուրդատան առաջիկա հոկտեմբերի 12-ին նախատեսված արվեստի գործերի ցուցահանդես-վաճառքի իսլամական, հնդկական եւ հայկական ստեղծագործությունների բաժնում ներկայացված են լինելու հայտնի արվեստագետ եւ բարերար Հարություն Հազարյանի հռչակավոր հավաքածուի վերջին, գուցեեւ լավագույն մասը՝ 16-18-րդ դարերի հայկական կերամիկական գեղազարդային եւ երեք արծաթե հազվագյուտ իրեր, հաղորդում է «Արմենյան միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթը:

Հարությունի հավաքածուն, որն արդյունք է հայ արվեստի նրբագույն գործերի նկատմամբ նրա ունեցած հետեւողական եւ սրտացավ վերաբերմունքի, համարվում է հայկական արվեստի աշխարհում ամենամեծ, ամենաընտրյալ եւ ամենահայտնի անձնական հավաքածուն: Դրա առանձին նմուշներ տարբեր առիթներով (1938-1982 թթ.) ցուցադրվել են ամերիկյան զանազան թանգարաններում (Բրուքլին, Ուիթնի, Հրեական) եւ համալսարաններում (Հարվարդ, Պրինստոն, Կալիֆոռնիա)՝ արժանանալով ճանաչողների գովաբանություններին: «Նյու Յորք թայմսը» գրել է «արտակարգ հավաքածուի» մասին, իսկ «Թայմսն» իր հոդվածը վերնագրել է «Հայկական ձեռքարվեստը սիրում է կանգ առնել»:

Քրիստիի աճուրդին ներկայացվելիք 35 ցուցոնների արժեքը տատանվում է 400-600-ից մինչեւ 6000-8000 ֆունտ ստեռլինգ (600-900-ից մինչեւ 9000-13000 ԱՄՆ դոլար):

Քրիստիի իսլամական բաժնի տնօրեն Ուիլյամ Ռոբինսոնը նշել է, որ «նմուշները Քրոթահիայի խեցեգործության ամենաամբողջական եւ ամենահետաքրքիր հավաքածուն են: Ես չգիտեմ (աշխարհում) մեկ ուրիշ իր, որը հավասար լինի (իր գեղեցկությամբ) մուր կատույց գույնի փայլուն այս ցուցոնին, օրինակ: Սոպահանում հանգրվանած հայերի բարձր ճաշակի մասին է խոսում»:

Իրերն այնքան ակնառու են, որ հատկանշականորեն առաջին անգամը լինելով Քրիստիի աճուրդների պատմության մեջ, «հայկական» բառն է ամրագրվել այդ առթիվ ավանդական իսլամական կատալոգի շապիկի վրա: Սա ինքնին պատմական կարեւոր իրադարձություն է հայկական արվեստի գործերի միջազգային ճանաչման տեսակետից:

Հարություն Հազարյանի կյանքը նույնպես խիստ հետաքրքիր է: Ծնվել է Կեսարիայում (Թուրքիա) 1886-ին: Ստամբուլից Նյու Յորք է գաղթել 1907-ին եւ զբաղվել մուշտակների առուվաճառքով: 1917-ին սկսել է հաճախել արվեստի գործերի աճուրդներ Եվրոպայում եւ Ամերիկայում ու նկատել, որ հայկական արժեքավոր ստեղծագործությունները ցիրուցան են լինում՝ առանց կոնկրետ բնորոշվելու: Շատ դեպքերում դրանք ներկայացվում են օսմանյան, իսլամական կամ թուրքական պիտակների ներքո: Հայկական մակագրությունները հարվում են արաբերեն կամ թուրքերեն: Դրանց մեծ մասը ցեղասպանության ժամանակ հայկական եկեղեցիներից կամ անհատների տներից գողացված իրեր են լինում: Մահոգված դրանց եւ հետագայում դրանց նմանների ճակատագրով՝ Հազարյանը նոթատակադրվում է, իր իսկ խոսքերով ասած, «հավաքել այդ թափառող որքերը» եւ ամերիկացիներին ներկայացնել հայկական արվեստի փառահեղությունը:

1962-ին Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ը Հազարյանին պարգեւատրել է Սբ. Գրիգոր Լուսավորիչ շքանշանով՝ 400 ծեռագրեր եւ արժեքավոր կրոնական իրեր Մատենադարանին եւ Սբ. Էջմիածնին նվիրելու համար: Հայաստանին նվիրված նրա արվեստի գործերի ընդհանուր արժեքը հասնում է 10 մլն դոլարի: Հարությունի հավաքածուն, որն արդյունք է հայ արվեստի նրբագույն գործերի նկատմամբ նրա ունեցած հետեւողական եւ սրտացավ վերաբերմունքի, համարվում է հայկական արվեստի աշխարհում ամենամեծ, ամենաընտրյալ եւ ամենահայտնի անձնական հավաքածուն: Դրա առանձին նմուշներ տարբեր առիթներով (1938-1982 թթ.) ցուցադրվել են ամերիկյան զանազան թանգարաններում (Բրուքլին, Ուիթնի, Հրեական) եւ համալսարաններում (Հարվարդ, Պրինստոն, Կալիֆոռնիա)՝ արժանանալով ճանաչողների գովաբանություններին: «Նյու Յորք թայմսը» գրել է «արտակարգ հավաքածուի» մասին, իսկ «Թայմսն» իր հոդվածը վերնագրել է «Հայկական ձեռքարվեստը սիրում է կանգ առնել»:

Հարություն Հազարյանի կյանքը նույնպես խիստ հետաքրքիր է: Ծնվել է Կեսարիայում (Թուրքիա) 1886-ին: Ստամբուլից Նյու Յորք է գաղթել 1907-ին եւ զբաղվել մուշտակների առուվաճառքով: 1917-ին սկսել է հաճախել արվեստի գործերի աճուրդներ Եվրոպայում եւ Ամերիկայում ու նկատել, որ հայկական արժեքավոր ստեղծագործությունները ցիրուցան են լինում՝ առանց կոնկրետ բնորոշվելու: Շատ դեպքերում դրանք ներկայացվում են օսմանյան, իսլամական կամ թուրքական պիտակների ներքո: Հայկական մակագրությունները հարվում են արաբերեն կամ թուրքերեն: Դրանց մեծ մասը ցեղասպանության ժամանակ հայկական եկեղեցիներից կամ անհատների տներից գողացված իրեր են լինում: Մահոգված դրանց եւ հետագայում դրանց նմանների ճակատագրով՝ Հազարյանը նոթատակադրվում է, իր իսկ խոսքերով ասած, «հավաքել այդ թափառող որքերը» եւ ամերիկացիներին ներկայացնել հայկական արվեստի փառահեղությունը:

1962-ին Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ը Հազարյանին պարգեւատրել է Սբ. Գրիգոր Լուսավորիչ շքանշանով՝ 400 ծեռագրեր եւ արժեքավոր կրոնական իրեր Մատենադարանին եւ Սբ. Էջմիածնին նվիրելու համար: Հայաստանին նվիրված նրա արվեստի գործերի ընդհանուր արժեքը հասնում է 10 մլն դոլարի: Հարությունի հավաքածուն, որն արդյունք է հայ արվեստի նրբագույն գործերի նկատմամբ նրա ունեցած հետեւողական եւ սրտացավ վերաբերմունքի, համարվում է հայկական արվեստի աշխարհում ամենամեծ, ամենաընտրյալ եւ ամենահայտնի անձնական հավաքածուն: Դրա առանձին նմուշներ տարբեր առիթներով (1938-1982 թթ.) ցուցադրվել են ամերիկյան զանազան թանգարաններում (Բրուքլին, Ուիթնի, Հրեական) եւ համալսարաններում (Հարվարդ, Պրինստոն, Կալիֆոռնիա)՝ արժանանալով ճանաչողների գովաբանություններին: «Նյու Յորք թայմսը» գրել է «արտակարգ հավաքածուի» մասին, իսկ «Թայմսն» իր հոդվածը վերնագրել է «Հայկական ձեռքարվեստը սիրում է կանգ առնել»:

Հարություն Հազարյանի կյանքը նույնպես խիստ հետաքրքիր է: Ծնվել է Կեսարիայում (Թուրքիա) 1886-ին: Ստամբուլից Նյու Յորք է գաղթել 1907-ին եւ զբաղվել մուշտակների առուվաճառքով: 1917-ին սկսել է հաճախել արվեստի գործերի աճուրդներ Եվրոպայում եւ Ամերիկայում ու նկատել, որ հայկական արժեքավոր ստեղծագործությունները ցիրուցան են լինում՝ առանց կոնկրետ բնորոշվելու: Շատ դեպքերում դրանք ներկայացվում են օսմանյան, իսլամական կամ թուրքական պիտակների ներքո: Հայկական մակագրությունները հարվում են արաբերեն կամ թուրքերեն: Դրանց մեծ մասը ցեղասպանության ժամանակ հայկական եկեղեցիներից կամ անհատների տներից գողացված իրեր են լինում: Մահոգված դրանց եւ հետագայում դրանց նմանների ճակատագրով՝ Հազարյանը նոթատակադրվում է, իր իսկ խոսքերով ասած, «հավաքել այդ թափառող որքերը» եւ ամերիկացիներին ներկայացնել հայկական արվեստի փառահեղությունը:

Մարզական

ՇԱԽՄԱՏ

Մարիա Կուվացուն եւ Ալեքսանդր Գալկինը՝ աշխարհի չեմպիոններ

Կարեն Սարյանը նվաճեց բրոնզե մեդալ



Երեկ Հայաստանի շախմատիստի կենտրոնական տանն ավարտվեցին աշխարհի մինչեւ 20 տարեկան աղջիկների եւ պատանիների առաջնությունները: Մինչեւ վերջ պահպանվեց պայքարի լարվածությունը՝ չեմպիոններն ու մրցանակակիրները հայտնի դարձան միայն վերջին տուրի վերջին րոպեներին: Նույնիսկ աղջիկների մրցաշարում, որտեղ չեմպիոնուհին կարծես թե նախապես կանխագուշակելի էր, վերջին երկու տուրերը լրիվ անսպասելի արդյունքներ բերեցին: Նախ իր երկու պարտիաները, գրեթե առանց լուրջ դիմադրության պարտվեց մրցաշարի անփոխարինելի առաջատար Մարիա Կուվացուն (Հունաստան): Վերջին տուրից առաջ միջազգային վարպետներ Յանա Յացկովան (Չեխիա) եւ Վիկտորիա Չմիլիտեն (Լիտվա) ես էին մնում ընդամենը կես միավորով, բայց այդպես էլ չկարողացան օգտագործել իրենց միակ հնարավորությունը:, Յացկովան նոյասավոր դիրքում վրիպում թույլ տվեց Սոֆիո Տկեշելաշվիլու հետ պարտիայում եւ բավարարվեց ոչ-ոքի արդյունքով, իսկ Չմիլիտեն պարտվեց միջազգային վարպետ Ի. Ռինա Կրաշին (ԱՄՆ): Ի վերջո, Կուվացուն, Յացկովան, Սիդոնիա Վայ[illegible] (Ռումինիա) եւ Կրաշը (որն, ի դեպ, վերջին 6 տուրերում 5,5 միավոր վաստակեց) 8,5-ական միավորով բաժանեցին 1-4-րդ տեղերը: Լրացուցիչ ցուցանիշների (մրցակիցների անհատական վարկանիշների գումարով) շնորհիվ չեմպիոնուհու կոչումը նվաճեց Կուվացուն, իսկ մնացյալները շարվեցին

Մարիա Կուվացու

Ալեքսանդր Գալկին

աղյուսակում վերը նշված հերթականությամբ: 8-ական միավորով 5-8-րդ տեղերը բաժանեցին միջազգային վարպետներ Ռուսուդան Գոլեթիանին, Սոֆիա Տկեշելաշվիլին (երկուսն էլ՝ Վրաստան), Վիկտորիա Չմիլիտեն եւ Ջենիֆեր Շահեյդը (ԱՄՆ): Հայաստանի աղջիկները վերջին տուրերում փորձ-ինչ բարելավեցին իրենց մրցաշարային վիճակը: Բոլոր չորսն էլ 7-ական միավորով վերջնագիծը հասեցին 12-18-րդ տեղերը բաժանողների խմբում: Դա, հանգամանքներին նայած, լավ արդյունք է համարել բոլորի համար, բացի գրոսմայստեր Լիլիթ Մկրտչյանից, որը կարող էր պայքար մղել ամենաբարձր տեղերի համար:

Վերջին երկու տուրերում երկուական հաղթանակ տարան տղաների մրցաշարի առաջատարներ գրոսմայստերներ Ալեքսանդր Գալկինը (Ռուսաստան) եւ Ռուսամ Կասիմջանովը (Ուզբեկստան) եւ նույն հերթականությամբ պահպանեցին իրենց տեղերը աղյուսակի վերին տեղերում: Ավելի դրամատիկ էր Լեւոն Արոնյանի եւ Կարեն Սարյանի մրցաշարային ճակատագիրը: Երկուսն էլ պարտվեցին նախավերջին տուրում, բայց կարողացան հաղթել եզրափակիչ տուրում եւ վաստակել 9-ական միավոր: Լրացուցիչ ցուցանիշների շնորհիվ բրոնզե մեդալը նվաճեց Կարեն Սարյանը: Արոնյանն էլ կարող է գոհ լինել գրոսմայստերի երկրորդ նորման կատարելու փաստից: 8,5-ական միավորով 5-8-րդ տեղերը բաժանեցին միջազգային վարպետներ Չան Պենյանը (Չինաստան), Ամիտի Սվիտուշինը (Սլովակիա), Ալեքսանդր Նաումանը (Գերմանիա) եւ Պավել Բլեմը (Լեհաստան): Մեր մնացած շախմատիստները վերջին տուրում անհաջող հանդես եկան: Ի վերջո, Անդրանիկ Մաթիկոզյանը վաստակեց 7, Արթուր Չիբուխչյանը՝ 6,5, Գաբրիել Սարգսյանն ու Վարուժան Հակոբյանը 6-ական, Դավիթ Պետրոսյանը՝ 5,5 միավոր:

ԱՐՄԵՆ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Միջազգային կարգի մրցավար

ԹԱՆՐԱՄԱՐՏ

Երիտասարդները երկրորդն են թիմային հաշվարկում

Սեպտեմբերի վերջին օրերին Լեհաստանում անցկացվեց ծանրամարտի եվրոպայի երիտասարդական առաջնությունը, որին 23 երկրների մարզիկներ մասնակցեցին:

Հիանալի հանդես եկան Հայաստանի ծանրորդները, որոնք թիմային պայքարում վաստակեցին 516 միավոր եւ գրավեցին երկրորդ տեղը: Այստեղ առաջինը Ռուսաստանի հավաքականն էր (560 միավոր), իսկ երրորդը՝ Թուրքիայի (502 միավոր):

Հայաստանի ներկայացուցիչները նվաճեցին 7 մեդալ, որոնցից 2-ը՝ ոսկե, 4-ը՝ արծաթե եւ մեկը՝ բրոնզե: Աշխարհի չեմպիոններ դարձան 62,5 կգ քաշային կարգում հանդես եկած երկու մարզիկներ՝ սպիտակցի Արմեն Ղազարյանը՝ հրում վարժությունում (150 կգ) եւ գյումրեցի Արտուր Մկրտչյանը՝ պոկում վարժությունում (127,5 կգ) արդյունքներով: Վերջինս երկամարտում ցույց տվեց 270 կգ արդյունք եւ 3-րդ տեղը գրավեց երկամարտում: 69 կգ քաշային վիգեն Խաչատրյանը (էջմիածին, գ. Սամադար) երկու արծաթե մեդալ նվաճեց: Նա հրում վարժությունում հաղթահարեց 167,5 կգ, իսկ երկամարտում՝ 307,5 կգ: Արծաթե մեդալակիրներ դարձան նաեւ 56 կգ քաշային կարգում հանդես եկող Արթուր Դանիելյանը (էջմիածին, Բաղրամյան), որը հրում վարժությունում բարձրացրեց 127,5 կգ եւ 77 կգ քաշային Ռաֆիկ Պետրոսյանը (Գյումրի). նա պոկում վարժությունում հաղթահարեց 145 կգ ծանրությունը:

Թենիսի նորություններ

Աշխարհի ոչ պաշտոնական թիմային առաջնության՝ Դեյիսի գավաթի եզրափակիչում կմրցեն Ավստրալիայի եւ Ֆրանսիայի հավաքականները: Դա հայտնի դարձավ այն բանից հետո, երբ ավստրալացիներն ու ֆրանսիացիներն իրենց խաղադաշտերում միեւնույն՝ 4-1 հաշվով հաղթեցին համապատասխանաբար Ռուսաստանի եւ Բելգիայի հավաքականներին:

Այս օրերին մի շարք խոշոր մրցաշարեր են անցկացվում: Իհարկե, դրանցից կարեւորագույնը Մյունխենում ընթացող «Մեծ սաղավարտի գավաթի» խաղարկությունն է: Այստեղ հանդես են գալիս այդ չորս մրցաշարերի գումարով առավել հաջող ելույթներ ունեցած 16 թենիսիստներ եւ 8 թենիսուհիներ:

Նշենք արդեն ավարտված մի քանի հանդիպումների արդյունքներ. տղամարդիկ՝ Գրեգ Ռուսեդսկի (Անգլիա)-Գուստավո Կուերտեն (Բրազիլիա)՝ 6-3, 3-6, 6-3, Ռիխարդ Կրայչեկ (Հոլանդիա)-Վինսենս Սփեյդի (ԱՄՆ)՝ 6-2, 7-5, Թոմաս Հաաս (Գերմանիա)-Դոմինիկ Հրբաթի (Սլովակիա)՝ 6-3, 6-2, կանայք- Սերենա Ուիլյամս (ԱՄՆ)-Արանտա Սանչես-Վիկարիո (Իսպանիա)՝ 6-3,6-1, Մարտինա Հինգիս (Շվեյցարիա)-Ամելի Մորեսմո (Ֆրանսիա)՝ 7-6, 6-2:

Մեր ճանաչված թենիսիստ Սարգիս Սարգսյանը Երեւանում անցկացված մրցաշարում առաջին տեղը գրավելուց հետո (եզրափակիչում նա հաղթել էր Տոլակ Գեւորգյանին), այժմ հանդես է գալիս Ռումինիայում ընթացող միջազգային մրցաշարում:

Առաջին շրջանում նա պարտության մատնեց ավստրիացի Մարկուս Իոելին: Իրենց առաջին հանդիպումները շահել են նաեւ Ալեխս Կորետխան (Իսպանիա), Անդրեյ Պավելը (Ռումինիա):

ՖՈՒՏԲՈԼ

Դաշտի տերերի առավելությամբ

Ակումբային թիմերի ամենահեղինակավոր մրցումներում՝ Չեմպիոնների լիգայում, անցկացվեցին 1-4-րդ խմբերի երրորդ տուրի հանդիպումները: Հատկանշական է, որ 8 խաղերից ոչ մեկում դաշտի տերերը 3 հաղթանակ տարան, իսկ 5 հանդիպում ոչ-ոքի ավարտվեց:

Առաջին խմբի միանձնյա առաջատար դարձավ «Լացիոն», որը Հռոմում ընդունեց «Մարիբորին» ու հաղթեց խոշոր հաշվով: Սլովեն ֆուտբոլիստները չէին հասցնում կասեցնել դաշտի տերերի գրոհները եւ հաճախ խախտում էին կանոնները: 20-րդ րոպեին մրցավարը հեռացրեց նրանց խաղացող Կիոյիին: Դրանից հետո կրտսեր Ինձագին՝ Սիմոնեն, Սերժիո Կոնսեյսաոն եւ Մարսելո Սալասը (2) գրավեցին «Մարիբորի» դարպասը:

Վերջապես առաջին միավորը շահեց Կիեւի «Դինամոն»: Դաշտի տերերը՝ Լեւերկուզենի «Բայերի» ֆուտբոլիստները միայն երկրորդ խաղակեսում կարողացան հասնել հաջողության (գոլը խփեց Կիրսթենը), սակայն դրանից փիչ անց Անդրեյ Գուսինը հավասարեցրեց հաշիվը:

Շաս հետաքրքիր պայքարում ընթացավ երկրորդ ակումբի երկու ֆավորիտների՝ «Բարսելոնի» եւ «Արսենալի» հանդիպումը: Կատալոնիայի մայրաքաղաքի «Նոու Կամպ» մարզադաշտում հավաքված 85 հազար հանդիսականներն ու բազմամիլիոն հեռուստադիտողները բարձրակարգ ֆուտբոլի ականատես եղան: Երկու թիմերն էլ հարձակողական խաղ ցույց տվեցին, մի շարք գոլային հնարավորություններ ունեցան եւ մեկական անգամ հասան հաջողության: Երկրորդ խաղակեսում իսպանացի Լուիս Էնրիկեն բացեց հաշիվը, սակայն Կանուն խփելով պատասխան գոլը, ոչ-ոքի պարգեւեց «Արսենալին»:

Նույն խմբի երկրորդ խաղում ԱԻԿ-ի ու «Ֆիորենտինայի» ֆուտբոլիստներին փաստորեն հաղթել չկարողացան օգտագործել իրենց միակ հնարավորությունը:, Յացկովան նոյասավոր դիրքում վրիպում թույլ տվեց Սոֆիո Տկեշելաշվիլու հետ պարտիայում եւ բավարարվեց ոչ-ոքի արդյունքով, իսկ Չմիլիտեն պարտվեց միջազգային վարպետ Ի. Ռինա Կրաշին (ԱՄՆ): Ի վերջո, Կուվացուն, Յացկովան, Սիդոնիա Վայ[illegible] (Ռումինիա) եւ Կրաշը (որն, ի դեպ, վերջին 6 տուրերում 5,5 միավոր վաստակեց) 8,5-ական միավորով բաժանեցին 1-4-րդ տեղերը: Լրացուցիչ ցուցանիշների (մրցակիցների անհատական վարկանիշների գումարով) շնորհիվ չեմպիոնուհու կոչումը նվաճեց Կուվացուն, իսկ մնացյալները շարվեցին

Առաջին հաղթանակը տարավ «Կրասնոդարը», որը Զագրեբում անցկացված խաղում 3 անհաջողության գնդակ խփեց վերջադիր՝ Գրացի «Շտուրմի» դարպասը:

Այսպիսով, 8 խմբերում ավարտվեցին առաջին շրջանի խաղերը, իսկ չորրորդ տուրի հանդիպումները կանցկացվեն հոկտեմբերի 19-20-ին:

Առաջին խումբ

«Լացիո» (Իտալիա)-«Մարիբոր» (Սլովենիա)՝	4-0
«Բայեր» (Գերմանիա)-«Դինամո» (Ուկրաինա)՝	1-1

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Ս
1. Լացիո	3	2	1	0	7-2	7
2. Բայեր	3	1	2	0	4-2	5
3. Մարիբոր	3	1	0	2	1-6	3
4. Դինամո	3	0	1	2	2-4	1

Երկրորդ խումբ

«Բարսելոն» (Իսպանիա)-«Արսենալ» (Անգլիա)՝	1-1
ԱԻԿ (Շվեդիա)-«Ֆիորենտինա» (Իտալիա)՝	0-0

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Ս
1. Բարսելոն	3	2	1	0	7-4	7
2. Արսենալ	3	1	2	0	4-2	5
3. Ֆիորենտինա	3	0	2	1	2-4	2
4. ԱԻԿ	3	0	1	2	2-5	1

Երրորդ խումբ

«Ռոսենբորգ» (Նորվեգիա)-«Բորուսիա» (Գերմանիա)՝	2-2
«Բոավիստա» (Պորտուգալ.)-«Ֆեյենորդ» (Հոլանդիա)՝	1-1

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Ս
1. Ռոսենբորգ	3	1	2	0	7-4	5
2. Բորուսիա	3	1	2	0	6-4	5
3. Ֆեյենորդ	3	0	3	0	4-4	3
4. Բոավիստա	3	0	1	2	2-7	1

Չորրորդ խումբ

«Մանչեսթր» (Անգլիա)-«Մարսել» (Ֆրանսիա)՝	2-1
«Կրասնոդար» (Խորվաթիա)-«Շտուրմ» (Ավստրիա)՝	3-0

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Ս
1. Մանչեսթր	3	2	1	0	5-1	7
2. Մարսել	3	2	0	1	5-3	6
3. Կրասնոդար	3	1	1	1	4-2	4
4 Շտուրմ	3	0	0	3	0-8	0

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հետքերով

Վախճանվեց ակադեմիկոս Դմիտրի Լիխաչովը

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Կյանքի 93-րդ տարում Սանկտ Պետերբուրգում վախճանվեց ակադեմիկոս Դմիտրի Լիխաչովը՝ ռուս մեծ գիտնականն ու հաղաքացին, համաշխարհային հռչակ վայելող բանաստեղծը:

Ինչպես ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի թղթակցին հայտնեցին, նա մահացել է այսօր, Մոսկվայի ժամանակով ժամը 13.30-ին, հիվանդանոցում, որտեղ նրան վերջերս վիրահատել էին:

ՀԱՄԱՌՈՏ

Գյունտեր Գրասը՝ գրականության նոբելյան մրցանակի դափնեկիր

ՍՏՈՒՀՈԼՄ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Գերմանացի հայտնի գրող Գյունտեր Գրասը դարձավ գրականության բնագավառի 1999 թ. նոբելյան մրցանակի դափնեկիր: Ըստ ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի հաղորդման, այդ որոշման մասին այսօր այստեղ հայտարարել է Շվեդիայի ակադեմիան: Գյունտեր Գրասը ծնվել է 1927 թ. եւ որպես գրող առաջին անգամ 1959 թ. հասարակայնության դատին է հանձնել «Թիթեղյա թմբուկ» զգայացունց վեպը, որի մեջ նա պատկերել է իր մանկության տարիները Դանցիգում /ներկայումս Լեհաստանի Գդանսկ քաղաքը/: 1960-ական թվականներին արձակագիրը մտնում է քաղաքական գործունեության ասպարեզ եւ եռանդագին մասնակցում ընտրարշավին՝ ի պաշտպանություն գերմանացի սոցիալ-դեմոկրատների ղեկավար Վիլի Բրանդտի: Վերջին անգամ գերմանացի գրողի Նոբելյան մրցանակ էր շնորհվել՝ 1972 թ. նշանավոր Հայնրիխ Թյոլին:

Երկրորդ թունել Լա Մանշով

ՓԱՐԻԶ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ: Լա Մանշի նեղուցում թունել կառուցող ընկերությունը մտադիր է դրա երկրորդ ճյուղավորումը կառուցել, որը նախատեսված է ավտոմեքենաների երթեւեկության համար: Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի կառավարությունների միջեւ պայմանագրին համաձայնագիրը, շինարարական ընկերությունը պարտավոր է մինչեւ 2000 թվականի ավարտը ներկայացնել երկրորդ թունելի շինարարության նախագիծը, որից հետո կուսումնասիրվեն այլ ընկերությունների համանման նախագծերը: Ավտոմեքենաների թունելի կառուցումը թույլ կտա լրացուցիչ կապիտալ ներդրումներ կատարել, ինչը կհանգեցնի եվրաթունելի պարտքերի կրճատման:

Մեծ Բրիտանիայում խաղատանը տանուլ տալու ազգային ռեկորդ՝ 18 միլիոն դոլար

ԼՈՆԴՈՆ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅՈՆ ՏԱՊՈՆ: Ավստրալիացի միլիարդատեր Քերի Փեյերը Լոնդոնի խաղատներից մեկում 11 միլիոն ֆունտ է տանուլ տվել (մոտավորապես 18,15 միլիոն դոլար): Նախորդ ռեկորդը հավասար էր ութ միլիոն ֆունտի եւ պահպանվեց հինգ տարի: Քերի Փեյերը դրանից այնքան էլ չի աղքատացել, նրա կարողությունը գնահատվում է 1,5 միլիարդ ֆունտ: Սակայն 60-ամյա Փեյերը վշտացել է, չէ որ նա սովոր է շահելու: Մի անգամ Լաս Վեգասում «Գրանդ կազինո»-ում նա շահել է 20 միլիոն դոլար: Փեյերի բարեկամները գտնում են, որ նա տխրողական հիշողություն ունի եւ խաղի ժամանակ իրավիճակը ակնթարթորեն վերլուծելու բացառիկ ընդունակություն: Սովորաբար Լոնդոնում, իր կանոնավոր այցերի ընթացքում, նա խաղատանը շահում է երկու-երեքական միլիոն ֆունտ, բայց այս անգամ բախտը թիկունք է դարձրել նրան:

ARMENTEL

Արմենտելը հայտարարում է մրցույթ

Հայաստանի Հանրապետության մի շարք մարզերում բջջային հեռախոսակապի կայանների նախագծման, էներգասնուցման եւ կառուցման շինարարական աշխատանքներ կատարելու մրցույթին մասնակցել ցանկացող կազմակերպությունները մինչեւ 04.10.99 թ. ժամը 12-ը պետք է Արմենտել ՀՁ շինարարության վարչություն (Սարյան 22, 7-րդ հարկ, 708 սենյակ) ներկայացնեն իրենց հայտերը փակ եւ կնքված ծրարներով:

Կազմակերպությունների կողմից անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ տեղեկատվությունը.

Պետական լիցենզիայի պատճենը նախագծման, էներգասնուցման եւ կառուցման շինարարական աշխատանքները կատարելու համար

Տվյալներ կազմակերպության ֆինանսական վիճակի մասին (հաշվարկային հաշվում եղած գումարի չափը, դեբիտորներ, կրեդիտորներ՝ առանձնացված անուններով եւ գումարներով, եւ այլն)

Տվյալներ աշխատողների քանակի եւ մասնագիտությունների մասին

Ինժեներատեխնիկական աշխատողների ցուցակը՝ անուն-ազգանուններով եւ մասնագիտություններով

Տվյալներ իրեն պատկանող բոլոր մեխանիզմների մասին (անվանումը, տարեթիվը)

Տեղեկություններ իրեն պատկանող արտադրամասերի մասին (ինչ է արտադրում եւ հզորությունը)

Կազմակերպությունը պետք է գրանցված լինի պետական ռեգիստրում առնվազն 1,5 տարի եւ պետք է ներկայացնի այդ ժամանակահատվածում՝ որտեղ եւ ինչ ծավալների նմանատիպ աշխատանքներ է կատարել:

ԱՐՄԵՆՏԵԼ ՀՁ ՀԱՄԱԲԱԿԱՑՆՈՒԹՅՈՒՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Բանախոսություն նվիրված մեծ երգիծանկարիչ

Ալեքսանդր Սարուխանի

ծննդյան 100-ամյակին

Գլխավոր բանախոս՝

Երվանդ Ազատյան (Դեսրոյթ)

Էքսպրոմտ. գեղարվեստական ծրագիր

Թեթեյան կենտրոն (Խանջյան 50)

4 հոկտեմբերի, ժամը 16:00-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԵՐԹԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԳՐՈՂ ԱԶԴԱՆՇԱՆԵՐԻՑ ԿԱՐՈՂ ԵՆ ՕԳՏՎԵԼ. ՆԵՐԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՊԱՐԱՌՈՒՏՅԱՆ ՀԱՄԱՅԱՆՔՈՎ

Վտանգ

Զգուշացում

Ռիսկ

Ապահովություն

HSBC. Սա անկասկած խորհրդանշում է, որ Դուք գործ ունեք առաջնակարգ ֆինանսական ծառայություններ մատուցող համաշխարհային կազմակերպության հետ:

Մենք գործում ենք ավելի քան 130 տարի աշխարհի 79 երկրներում եւ տարածքներում՝ ապասարկելով առավել քան 20 միլիոն հաճախորդների:

Սրանք լոկ թվեր են, սակայն դրանց հետեւում կանգնած են մեր ավանդությունն ու գործին նվիրվածությունը, որոնց իրավացիորեն Դուք կարող եք վստահել:

Աշխարհի ցանկացած անկյունում, Ձեր կյանքի ցանկացած հատվածում, HSBC-ն միշտ Ձեզ հետ կլինի:

HSBC

ԱՇԽԱՐՀԻՆ ԱՌԱՋԱՏԱՐԱԾ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ

1 հոկտեմբեր

ԱՐ

17.00 Հայլուր
17.20 Չինաստանի ժողովրդական Հանրապետություն 50
18.00 Հեռուստասերիալ «Մոխրոտը»
19.00 Ով ով է
19.30 Հեռուստասերիալ «Կրթեր»
20.00 Մարդու ժամանակը
20.40 Ճանապարհ դեպի կրկես
21.00 Հայլուր
21.40 Հեռուստակասալոգ
22.00 Գ/Ֆ «Ավերիչը, ավերիչը»
23.30 Գավիթ
00.00 Հայլուր
00.20 Շախմատի երիտասարդների աշխարհի առաջնության օրագիր
00.25 Կեսգիշերային ճեպընթաց
01.20 Ուրիկոն+
Արքայական հեռարձակմամբ
02.00 Հեռուստասերիալ «Իմ երկրորդ մայրը»

ՄՇԱԿՈՒՅԹ

19.00 Սուլֆիլմ
19.10 Չինաստանի ժողովրդական Հանրապետության 50-րդ տարեդարձը
20.05 Հեռուստաֆուտբոլ
20.30, 1.10 Լրաբեր
21.05 «Հեմինգուեյ»
22.00 Սիրեցիր զմփմեանս
22.15 «Ճանապարհ լուսո». կրթություն եւ գիտություն
22.55 Գ/Ֆ «Սլ Տառը»

ԱՐ

9.00 Տոմար
19.00 «Չղջիկը» ներկայացնում է բնաբխարհ
19.30, 21.30, 23.30 Սուրհանդակ
19.50 Մամուլի խոսնակ
20.05 Երաժշտական վերհուշ
20.30 Ասպարեզ
21.10 Չղջիկ
21.50 Գ/Ֆ «Եղեմ»
24.00 Անդորր
0.05 Ա. Էլբակյանի «Ուրբաթ գիշեր բոլորովին իրեն չունեմ» հեղինակային ծրագիրը
(2.30 Սուրհանդակ)

ԱՐ

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Հանուն սիրո»
16.00 Նորություններ
16.15 Ֆիլմ-հեքիաթ «Սալթան թագավորի մասին»
17.15 Գ/Ֆ «Տերեկային գնացք» (դերերում Ա. Տերեխովա, Վ. Գաֆտ, Տ. Լավրովա, Ա. Նեմոլյաեւա, 1976 թ.)
19.00 Նորություններ
19.25 Ջենթլմեն շոու
20.00 Համով պատմություններ
20.15 Վավ. դետեկտիվ «Ձավթում Պետրովկայում. 1996 թ. գործը»
20.45 «Հրաշքների դաշտ»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
22.40 Մեծ խուզարկուները. Կոլոմբո, «Սթիվեն Սփիլբերգը շտապում է օգնության»
00.05 «Է՞խ, Սեմյոնովնա». չաստուշկայի համառուսական սուրբեր գավաթ
00.50 Նորություններ
01.05 Գիշերային կինոսրահ. «Վերջնագծից այն կողմ» (դերերում Ի. Տալկով, Ե. Սիդիխին, 1991 թ.)

ՌՏՎ

7.30-10.20 Բարի լույս, Ռուսաստան
8.00, 9.00, 10.00 Լուրեր
9.15 Հերթապահ բաժանմունք
10.20 Հոմեոպատիա եւ առողջություն
10.30 Երկխոսություններ ծկնորսության մասին
11.00 Սերիալ «Միլեդի»
11.50 Սերիալ «Մեր գաղտնիքի ամառը»
12.50 Հոմեոպատիա եւ առողջություն
13.00 Թոք-շոու «Անուշ լինի»
14.00, 18.00, 20.00, 22.00, 02.00 Լուրեր
14.20 Երկու դաշնամուր
15.10 Սերիալ «Անտոնելա»
16.05 Սերիալ «Վայրի հրեշակը»
17.00 Խանութ բազմոցի վրա
17.30 Սուլցծրագիր
18.20 Աշտարակ
18.55 Երդվյալ ատենակալների հեռուստատեսային դատարանի նիստը
20.30 Ագաթա Քրիստի. Պուարո. «Արքայական սուտակի առեւանգումը»
21.25 «Քաղաքիկ»
22.45 «Բալենու այգին» ներկայացման բեմադրող ռեժիսոր Լեոնիդ Տրուլկինի ներածական խոսքը
22.50 Ռուսական դրամատիկ. «Բալենու այգին» ներկայացման հեռուստատարբերակը
01.40 Հերթապահ բաժանմունք
02.20 Խանութ բազմոցի վրա

ՍՓՅՈՒՌ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

հեռախոսով (590000), տեղեկագրքով (1800 դրամ), սկավառակով (3600 դրամ), INTERNET ցանցով (www.arminco.com/spyur; spyur.acc.am; armscape.com/spyur)

«Սփյուռք Մեծ» հասարակության տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2. Գրանցման թիվ 65. Դասիլ 69149. Պատվեր 1126. Տպաքանակը՝ 4000. Ստորագրված է տպագրության՝ 30.09.1999. Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@